

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի օգոստոսի 27-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի հիմնական դրույթները:

Ի թիվս այլ հարցերի, քննարկվել է նաև գիտական կազմակերպությունների և ՀՀ ԳԱԱ-ի հարցը, նշվել է, որ «առաջարկվող նոր կարգավորումներով ՀՀ ԳԱԱ-ն հանդիսանալու է ինքնավարության սկզբունքով կառավարվող հիմնադրամ», ինչն ամրորված ձևակերպում է:

Կարծում ենք, որ ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի հետագա զարգացման հարցերն ունեն սկզբունքային նշանակություն ինչպես գիտության ընդհանուր ոլորտի զարգացման, այնպես էլ ՀՀ-ում գիտելիքահեն տնտեսության և հասարակության ձևավորման տեսանկյունից: Տարակուսելի է, որ գիտության ոլորտի համար առաջարկվող մեխանիզմները չեն քննարկվել գիտական հանրության և ՀՀ ԳԱԱ-ի հետ: Բովանդակային քննարկումները հնարավորություն կտային մշակել գիտական հանրության կողմից ընդունելի մոտեցումներ և գտնել այնպիսի լուծումներ (կարգավորումներ), որոնք ուղղված կլինեին տասնամյակների ընթացքում ՀՀ գիտության ոլորտում ձևավորված ավանդույթների, ինչպես նաև համաշխարհային գիտական տարածքում մեր ունեցած դիրքի պահպանմանն ու հետագա զարգացմանը: Խորհրդակցության ընթացքում քննարկված ձևակերպումը հարուցում է մի շարք բովանդակային և կազմակերպարարական բնույթի հարցեր, ինչն ամրորողության միջավայր է ստեղծում գիտական կազմակերպությունների և գիտնականների համար:

Համոզված ենք, որ գիտական կազմակերպությունների և ՀՀ ԳԱԱ-ին վերաբերող նոր կարգավորումները պետք է նախապես անցնեն բովանդակային քննարկումներ բնագավառի ներկայացուցիչների հետ, իսկ պետական կառավարման մարմինների քննարկումներին պետք է ներկա լինեն ՀՀ ԳԱԱ-ի ղեկավարը ՀՀ ԳԱԱ նախագահի:

Սույն մոտեցումն առավել կառուցողական է, հնարավորություն է տալիս ոլորտի համար սկզբունքային նշանակություն և հետևանքներ ունեցող լուծումներն (որոշումները) ընդունել հարցի ամբողջական և համակողմանի քննարկման արդյունքում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան դատապարտում է գիտաշխատողների նկատմամբ բռնի ուժի կիրառումը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան դատապարտում է սույն թվականի սեպտեմբերի 6-ին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական բիոմիայի գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցների նկատմամբ բռնի ուժի կիրառումը, ինչի արդյունքում գիտնականներից մեկը ստացած վնասվածքների պատճառով ՀՀ ոստիկանության կողմից տուժող է ճանաչվել: Միջադեպը տեղի է ունեցել գիտաշխատողների խաղաղ ակցիայի ժամանակ, ովքեր բեռնատարների առաջ փակել էին շինհրապարակի մուտքը: Գիտաշխատողները դիմել են այդ քայլին, երբ «Գրին փոփերթի դիվելյուիմենթ» ՓԲԸ-ն, անսալով ՀՀ վարչական դատարանի՝ Ազատության պողոտա 26/1 հասցեում իրականացվող կառուցապատման աշխատանքները կասեցնելու մասին որոշմանը, շարունակել է շինաշխատանքները: Կառուցապատման աշխատանքները Կենտրոնի շենքերի քարե շարվածքից պատերի կոնստրուկտիվ համակարգում առաջացրել են տարբեր ձևախախտումներ և առկա ճաքերի՝ բացվածքների դիմանիկ զարգացում: Նման պայմաններում շենքի հետագա շահագործումը ոչ միայն կարող է վտանգ ներկայացնել գիտական անձնակազմի, այլ նաև նշված տարածքում շահագործվող բարձր ճշտության թանկարժեք գիտական սարքավորումների հետագա շահագործման համար:

Անթույլատրելի է երկրում տիրող անպատժելիության մթնոլորտը, երբ դատարանի որոշումը չի կատարվում, և դրա համար որևէ մեկը պատասխանատվություն չի կրում:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և
հասարակայնության հետ կապերի բաժին**

Քննարկում ՀՀ ԳԱԱ-ում. ինչպես կանխել վիրուսային հիվանդությունների աճը Հայաստանում

Հայաստանում աճել է վիրուսային հիվանդությունների հաճախականությունը, ինչն անհանգստություն է առաջացրել հասարակության շրջանում: Արդյո՞ք մեզ սպասվում է նոր համավարակ, ինչպե՞ս կանխել վտանգները և ի՞նչ գիտական ենթակառուցվածքներ և հետազոտություններ են անհրաժեշտ: Այս հարցերը քննարկվեցին սեպտեմբերի 16-ին՝ ՀՀ ԳԱԱ կենսաբանականության և կենսամոլեկուլային պրոբլեմային խորհրդի նիստի ժամանակ, որին մասնակցում էր ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը:

Նիստը վարեց ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը: «Մեզ անհրաժեշտ է ստեղծել հստակ ռազմավարություն՝ կանխելու վիրուսային հիվանդությունների աճը Հայաստանում: Կան նաև բակտերիալ հիվանդություններ: Այսօրվա մեր նիստի նպատակն է մշակել կառուցողական և իրատեսական առաջարկություններ՝ այդ ռազմավարությունն ունենալու համար»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:



Նա նշեց, որ Հայաստանում ունի գիտական ներուժ՝ այդ ոլորտում հետազոտություններ իրականացնելու համար: Օրինակ, 2020 թվականին ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում ստեղծվեց COVID-19-ի 100.000-ից ավելի թեստ: ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում 13.000 տարբեր մանրէներ են ուսումնասիրվում և սերվենավորվում:

Նիստի ժամանակ ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի հակավիրուսային դեղամիջոցների հայտնաբերման լաբորատորիայի վարիչ Հովակիմ Ջաքարյանը հանդես եկավ Կապիկի ծաղիկի և Արևմտյան Նեղոսի տենդի վիրուսների կենսաբանական յուրահատկությունների, ներկայումս իրականացվող հակավիրուսային և պատվաստանյութային հետազոտությունների ընթացքի, ինչպես նաև Հայաստանում ուսումնասիրություններ իրականացնելու համար անհրաժեշտ նախադրյալների առկայության և դրանց կարևորության մասին զեկուցմամբ: «Արևմտյան Նեղոսի տենդի վիրուսը ՌՆԻճ գենոմով վիրուս է: Հայաստանում նոր է հանդիպում, բայց այն հիմնականում վիրուս է, որի մասին գիտենք տասնամյակներ շարունակ: Հիմնականում թռչունների, մանրէների միջոցով փոխանցվում է մարդկանց, մասնավորապես սուղների: Մարդուց մարդ օդակաթիլային եղանակով փոխանցման դեպքեր հայտնի չեն, բայց կան այլ տիպի փոխանցման ձևեր, օրինակ՝ օրգանների փոխպատվաստման կամ արյան փոխներարկման դեպքում: Մահացության աստիճանը հիմնականում տատանվում է 2-3 տոկոսի սահմաններում: Վարակված մարդկանց 80 տոկոսի շրջանում ախտանշաններ չեն դրսևորվում, իսկ եթե անգամ դրսևորվում են, ծանր չեն: Չնչին տոկոսի դեպքում է, որ կարող են բարդացումներ լինել»,- ներկայացրեց Հովակիմ Ջաքարյանը:

Ամրադառնալով Կապիկի ծաղիկի վիրուսին, որը սկսել է «ճանփորդել», նա ասաց.- «Սա ՂԵՐԳԵՆԻՈՒՄ ունեցող վիրուս է: Բարեբախտաբար, Հայաստանում այն չի գրանցվել, հիմնականում հանդիպում է Աֆրիկայում, հայտնի Բնական ծաղիկի հետ նույն ընտա-

նիքի վիրուսներից է: Բնական ռեզերվուարը որոշ կրծողների տեսակներ են և կապիկները: Վերջին 30-40 տարվա ընթացքում մարդկանց փոխանցման դեպքերը որոշ պարբերականությամբ գրանցվում են հիմնականում Աֆրիկայում: Անհանգստությունն այստեղ սկսեց կտրուկ աճել վերջին 2 տարվա ընթացքում, երբ դեպքերի քանակն Աֆրիկայում կտրուկ աճեց՝ անցնելով 18.000-ը: Սա շատ մեծ թիվ է: Իսկ մահացության թիվն անցավ 900-ը, և գրանցվեցին առաջին դեպքերն Աֆրիկայից դուրս: Կապիկի ծաղիկի վիրուսը փոխանցվում է մարդուց մարդ, ծանր վիրուս է, կարող է օդակաթիլային եղանակով էլ փոխանցվել, բայց հիմնականում կոնտակտի միջոցով է փոխանցվում: Մահացության աստիճանն այստեղ հասնում է 5 տոկոսի: Երկու վիրուսի դեպքում էլ չկա հակավիրուսային դեղամիջոց»:

Հովակիմ Ջաքարյանը նշեց, որ, ըստ վերջին 50 տարվա համաճարակների, համավարակների պատկերի, հստակ է՝ որևէ մեկ վիրուս չի առաջանում: Այս վիրուսային ընտանիքները հայտնի են, պարզապես փոխվում են փոխանցման և տարածման եղանակները: Կարևոր է հետազոտել այդ վիրուսները խաղաղ ժամանակաշրջանում, երբ չկան անցումները: Իսկ հետագոտելու համար անհրաժեշտ են գիտական ենթակառուցվածքներ և մասնագետներ, որպեսզի երկիրը պատրաստ լինի մեր համաճարակների և համավարակների:


Հովակիմ Ջաքարյանը ներկայացրեց օրինակներ, երբ Հայաստանում իրականացվել են խոստումնալից աշխատանքներ, սակայն, ենթակառուցվածք չունենալու պատճառով, հետազոտությունների մի մասն իրականացվել է արտերկրում, և կիսվել է մտավոր սեփականության իրավունքը: Ըստ գիտնականի՝ Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել հետազոտական լաբորատորիաներ, կենդանանոցներ, վիրուսների բանկ և հաշվողական մոդելներ:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բջջաբանության և վիրուսաբանության լաբորատորիայի վարիչ Ջավեն Կարալյանը նշեց, որ հին հայտնի վիրուսների բռնկումները պայմանավորված են կլիմայի փոփոխությամբ և արդյունաբերության զարգացմամբ: «Հայտնի վիրուսները, որոնք վաղուց մարդու հետ առնչություն չունեն, գտնում են մեր տերիտորիան և բնականաբար բազմանում: Կանգնեցնել այդ վարակները Հայաստանի սահմանների վրա չի ստացվի, կլիմայի փոփոխությունը դադարեցնել դարձյալ չենք կարող: Եկեք հասկանա՞նք՝ ինչ կարող ենք մենք անել, որպեսզի մեղմացնենք այդ վիրուսների ներթափանցումը: Մենք կարող ենք պատրաստել լավ կադրեր, որոնք կաշխատեն մոլեկուլային կենսաբանության, մոլեկուլային վիրուսաբանության մեթոդներով: Կարող ենք աշխատել նաև այլ մասնագետների հետ՝ առաջնային սթրիկինգ անելու համար: Պետք է առանձին զարգացնել գիտական ուղղությունը Հայաստանում, և դա լոկոմոտիվի մեծան է իր հետևից կշարժի մնացած ուղղությունները»,- ասաց Ջավեն Կարալյանը:

Նիստի ժամանակ ելույթներով և առաջարկություններով հանդես եկան առողջապահության ոլորտի առաջատար մասնագետներ: Որոշվեց մշակել առաջարկությունների փաթեթ վիրուսային մեր համաճարակներին և համավարակներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ գիտահետազոտական ենթակառուցվածքների, հետազոտությունների և համագործակցությունների կազմակերպման և իրականացման համար: Առաջարկությունների փաթեթը կներկայացվի պատկան մարմիններին:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և
հասարակայնության հետ կապերի բաժին**

«Սերգեյ Փարաջանով - 100» միջազգային գիտաժողովը



Ս/թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Սերգեյ Փարաջանով - 100» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը Սերգեյ Փարաջանովի թանգարանի հետ համատեղ:

Գիտաժողովի նպատակն էր ներկայացնել միջազգային փարաջանովագիտության արդի փուլը, քննության առնել հայ նշանավոր կինոռեժիսորի ստեղծագործական գործունեությունը, արժևորել նրա թողած ժառանգությունը, բացահայտել Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության դերն ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային կինոարվեստում:

Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ ԱՄՆ-ից, Իսպանիայից, Իտալիայից, Լեհաստանից, Հայաստանից, Ղազախստանից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Սերբիայից, Վրաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը: «Այսօր նշանավոր օր է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տարեգրության մեջ, քանի որ ակադեմիական արվեստագիտության մեջ առաջին անգամ կազմակերպվում է մեծ ներկայացուցչական ու մասշտաբային գիտաժողով: ՀՀ-ի Հայաստանում փարաջանովագիտության ակունքներում կանգնած է հենց Արվեստի ինստիտուտը: Այս առիթով ուզում եմ հիշել տաղանդավոր կինոգետ, Արվեստի ինստիտուտի հեռուստատեսության և կինոյի բաժնի վարիչ երջանակահիշատակ Կարեն Քալանթարին: Փարաջանովագիտության մեջ Փարաջանովի և Քալանթարի անուններն ասես միահյուսվել են, քանի որ վերջինիս կինոգիտական հետաքրքրությունների առաջնություն է հարատև գտնվել Փարաջանովի արվեստի ուսումնասիրությունը: 1998 թ. Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց Քալանթարի «Очерки о Параджанове» հիմնարար մենագրությունը, որը դարձավ կարևոր հանգրվան միջազգային փարաջանովագիտության ասպարեզում և հուսալի հիմք՝ հետագա ուսումնասիրությունների համար: Փարաջանովի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը մշտապես եղել է Արվեստի ինստիտուտի կինոգիտական հետաքրքրությունների կենտրոնում: Վստահ եմ, որ մեր միջազգային գիտաժողովի արդյունքները կդառնան կարևոր հանգրվան արվեստագիտության ասպարեզում և նոր խոսք փարա-

ջանովագիտության մեջ», - ասաց Աննա Ասատրյանը:

Սերգեյ Փարաջանովի ստեղծագործական ժառանգությունն արժևորեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Փարաջանովի արվեստին բնորոշ են խոր փիլիսոփայությունը և կերպարվեստի պատկերավորման յուրօրինակ ոճը: Նա ուներ գեղագիտական բարձր ճաշակ, ինչը հնարավորություն էր ընձեռնում ընտրելու ճիշտ սյուժեներ և նկարահանելու դրանք իրեն բնորոշ բարձր արվեստով: Նա իր խոսքով վարակում էր իր գործընկերներին և գաղափարների անսպառ աղբյուր էր: Համեմատել մարդ, որի վաստակը պետք է անպայման արժևորել, ստեղծել նախադրյալներ՝ շարունակելու և զարգացնելու նրա գործը և հայ կինոարվեստը բարձրացնելու նոր բարձունքների»:

«Փարաջանովյան կերպարն ինձ համար Նոբելյան մրցանակի կերպար է, - նշեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, - անցյալ տարի ՅՈՒՆԵՍԿՕ-ն որոշում ընդունեց Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանները հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների՝ 2024-2025 թվականների օրացույցում ընդգրկելու վերաբերյալ: Կառավարական հանձնաժողովը հավաքագրեց հայտերը և նախաձեռնեց փարաջանովյան տարվա կազմակերպումը: Ընտրվեցին այն հայտերը, որոնք յուրովի են ներկայացնում Փարաջանովին, և մենք հասկացանք՝ ինչքան մեծ է բազմաշերտ է Փարաջանովի թողած ժառանգությունը: Այստեղ պետք էր գիտական խոսք և ասելիք: Փարաջանովին իր ստեղծածով ավելին է, քան մշակույթը, և հենց դրա հիմնավորումներն են սպասվում այս գիտաժողովի ընթացքում»:

Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն Անահիտ Միքայելյանը նշեց, որ թանգարանն իր 33 տարիների ընթացքում աշխարհին ներկայացրել է Փարաջանով արվեստագետին և բազմաթիվ հետազոտողների համար դարձել օջախ: «Այսօր արվեստագետ հասարակությունը հնարավորություն կունենա գիտաժողովի մասնակիցներից լսելու իրենց հուշերը, իրենց խոսքը Սերգեյ Փարաջանովի մասին: Սա առաջին այսպիսի մասշտաբային գիտաժողովն է՝ նվիրված Փարաջանովին, և ես ցանկանում եմ, որ այն լինի շարունակական», - ասաց Անահիտ Միքայելյանը:

Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի ռեկտոր Սառա Նալբանդյանը ընդգծեց. «Սերգեյ Փարաջանովը հետխորհրդային կինոյի համառոտագիտություն մասիրված և ամենաճանաչված ռեժիսորներից է, միևնույն ժամանակ ամենուրեք կարիք կա անդրադարձալու նրա աշխատանքին, քանի որ շատ քողարկված մշակութային կող էր, վառ վիզուալ շարք, լեզու, որը դեռևս բացահայտման կարիք ունի»:

Փարաջանովի ֆենոմենին եռօրյա գիտաժողովի ընթացքում բացահայտեցին միջազգային ճանաչում ունեցող առաջատար գիտնականներ և երիտասարդ հետազոտողներ՝ ներկայացնելով 55 գիտական զեկուցում:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցան «Tribute to Sergei Parajanov. On the centenary of his birth» հոդվածների ժողովածուի (Պոզնան, 2024), Կարեն Քալանթարի «Очерки о Сергее Параджанове» աշխատության 2-րդ հրատարակության (Սանկտ Պետերբուրգ, 2023), Սուսաննա Դավթյանի «Տոն, որ միշտ քեզ հետ է» եռալեզու՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, աշխատության (Երևան, 2024) շնորհանդեսները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Վիլյամ Սարոյանի հիմնադրամի համագործակցությունը

2024 թ. օգոստոսի 30-ին՝ Վիլյամ Սարոյանի ծննդյան նախօրյակին, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում հյուրընկալվեց Վիլյամ Սարոյանի հիմնադրամի (Սան Ֆրանցիսկո) նախագահ Արթ Սեդրակյանը:

Դեռևս 2023 թ. նոյեմբերին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում ու Վիլյամ Սարոյանի հիմնադրամը կազմակերպել էին սարոյանագիտության մեջ անմախադեմ՝ «Վիլյամ Սարոյանը և արվեստը» միջազգային գիտական կոնֆերանսը: Սան Ֆրանցիսկոյում գործող Վիլյամ Սարոյանի հիմնադրամը, որը 1966 թ. ստեղծել է հենց ինքը՝ Վիլյամ Սարոյանը, ներկայումս գլխավորում է Արթ Սեդրակյանը՝ որդին ականավոր գրողի մտերիմ ընկերոջ, որը երկար տարիներ եղել է Վիլյամ Սարոյանի հիմնադրամի նախագահը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Վիլյամ Սարոյանի հիմնադրամի միջև համագործակցության երկուստեք հետաքրքրությունները:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին խորացնելու և առավել բազմակողմանի դարձնելու համատեղ միջոցառումների կազմակերպումը, որոշվեց 2025 թ. Արթ Սեդրակյանի հայաստանյան այցի ընթացքում կազմակերպել սարոյանագիտական միջազգային գիտական կոնֆերանս, որի ընթացքում տեղի կունենա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Վիլյամ Սարոյանի հիմնադրամի միջև համագործակցության հուշագրի ստորագրման հանդիսավոր արարողությունը:

Արթ Սեդրակյանը, որը վերջին յոթ տարիների ընթացքում ղեկավարում է Վիլյամ Սարոյանի հիմնադրամի աշխատանքները, և ուն առաջնահերթ նպատակներից մեկն էլ Հայաստանում Սարոյանի ստեղծագործության հանրառեչակումն է, հաճելիորեն զարմացավ՝ տեղեկանալով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում սարոյանագիտության ասպարեզում տարվող աշխատանքների մասին: Մասնավորապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անուշ Ասլիբեկյանի «Վիլյամ Սարոյանի թատերագրության բնույթը և հայ բեմը» մենագրությունը, որը հայ իրականության մեջ Սարոյանի թատերագրությանը և մեծանուն գրողի ստեղծագործությունների բեմադրություններին նվիրված առաջին ամբողջական ուսումնասիրությունն է:

Արթ Սեդրակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտին նվիրեց Վիլյամ Սարոյանի հեղինակած գծանկարը: Իսկ հաջորդ օրը Արթ Սեդրակյանը և ինստիտուտի աշխատակիցները Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում ծաղիկներ խոնարհեցին ականավոր հայորդու շիրմին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Gevorg Y. Baghdasaryan
Marine A. Mikilyan

Magnetoelastic
Vibrations and Stability
of Magnetically Active
Plates and Shells



«Springer» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒ ԼՈՅՍ Ե ՏԵՍԵԼ ՀՀ ԳԱԱ ՄԵԽԱՆԻԿԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թ. հունիսին «Springer» հրատարակչությունը լոյս է ընծայել ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի գիտաշխատողներ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Բաղդասարյանի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարինե Միկիլյանի «Մագնիսապես ակտիվ սալերի և թաղանթների մագնիսաառաձգական տատանումներն ու կայունությունը» մենագրությունը: Այն առաջարկում է մագնիսաառաձգականության ոչ ստացիոնար խնդիրների մաթեմատիկական մոդելավորման նոր մեթոդներ, բացահայտում է էլեկտրամագնիսական և մեխանիկական երևույթների փոխազդեցության ֆիզիկական

մագնիսապես ակտիվ առաձգական բարակապատ մարմիններում, ներառում է ֆլատերի երևույթի նոր արդյունքներ:

Նման հեղինակավոր հրատարակչության կողմից այս գրքի հրատարակությունը, անշուշտ, մեխանիկայի բնագավառում մեր գիտնականների կատարած ուսումնասիրության կարևորության վկայություն է, ինչպես նաև՝ միջազգային գիտական հարթակներում աշխատության հանրայնացման լավ օրինակ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Վաստակաշատ հայագետ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող, ԳԱԱ «Բանբեր հայագիտության» միջազգային գիտական հանդեսի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Արմենակի հառաջատար հետազոտողի:

Մ. հառաջատարը ծնվել է 1939 թ. օգոստոսի 24-ին Երևանում, ծառայողի ընտանիքում: 1959 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ: Այն ավարտել է 1964 թ.: մասնագիտանալով հայ գրականության պատմության մեջ, որ նախանշեց նրա գիտահետազոտական հետազոտ գործունեությունը արդեն որպես արևմտահայ մամուլի պատմության առաջատար հետազոտողի:

Գրեթե վեց տասնամյակ Ա. հառաջատարը աշխատում է ԳԱԱ համակարգում, որից 39 տարի՝ Պատմության ինստիտուտում: 1967-1973 թթ. աշխատել է «Հայկական սովետական հանրագիտարանում» հատուկ գիտական խմբագրությունում, նախ՝ իբրև սրբագրիչ, ապա՝ խմբագիր, 1973-1985 թթ.՝ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնում՝ որպես ավագ գիտաշխատող, գիտական խմբի ղեկավար: 1985 թ. աշխատանքի է անցել Պատմության ինստիտուտում՝ մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնում, նախ՝ որպես ավագ գիտաշխատող, ապա՝ 1992-ից ցուր բաժնի վարիչ:

1972 թ. Ա. հառաջատարը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Զմյուռնիայի հայ պարբերական մամուլը (XIX դ. 60-ական թթ.)» թեմայով: 1982 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900)» թեմայով և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2009-ից պրոֆեսոր է: 2010 թ. հայագիտության բնագավառում ունեցած ծանրակշիռ ներդրման համար

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ալբերտ հառաջատարի ծննդյան 85-ամյակի առթիվ)

ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Ա. հառաջատարը 1988-2017 թթ. ստանձնել է նաև ԳԱԱ ավագագույն, արտերկրում ևս մեծ հեղինակություն ունեցող պարբերականի՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի գլխավոր խմբագրի պարտականությունը: Հարկ է ասել, որ նրա նշանակումը զուգահեյպեց Արցախյան շարժման զարթոնքի հետ: Այդ տարիներին «Լրաբերը» խոշոր դեր կատարեց՝ Արցախի հարցի վերաբերյալ գիտականորեն հիմնավորված բազում հոդվածներ տպագրելով, և դարձավ այդ շարժման առաջամարտիկներից մեկը հայ խորհրդային մամուլում:

2017 թ. հայագետը «Բանբեր հայագիտության» միջազգային գիտական հանդեսի գլխավոր խմբագիրն է: Նշենք նաև, որ Ա. հառաջատարը «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հիմնադրման օրից՝ 2005 թ. մինչև 2024 թ. գլխավորել է դրա հասարակագիտական բաժինը:

Անվանի պատմաբանը հայ պարբերական մամուլի զարգացման և հասարակական մտքի, հայ գաղթաբանների պատմության ճանաչված մասնագետ է՝ գիտահետազոտական աշխատանքների լայն շրջագծով: Նա իր լույսն ունի հայ պատմագրության մեջ՝ գիտական առաջնակարգ արժեք ունեցող և միջազգային ճանաչում ստացած ուսումնասիրություններով: Ա. հառաջատարի աշխատությունները վերաբերում են տեսական կարևորություն ունեցող այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ արևմտահայերի լուսավորական շարժումը XIX դարում, նրանց Ազգային սահմանադրությունը, հասարակական-քաղաքական հոսանքները հայ իրականության մեջ, արևմտահայ մամուլի մտավոր ու մշակութային արժեքը 1840-1922 թթ., Օսմանյան թուրքիայի խոշորագույն հայ գաղթավայրերի՝ Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի համազգային նշանակությունը: Այս ոլորտներին վերաբերող 9 գրքի և ավելի քան 200 հոդվածի հեղինակ է:

Ա. հառաջատարը լայն ճանաչում ունի ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանի հայագիտական շրջաններում. ԱՄՆ-ում, Իտալիայում, Թուրքիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Ուկրաինայում տպագրվել են նրա աշխատություններից, ինչպես և գրախոսականներ՝ դրանց վերաբերյալ:

Անուրանալի է Ա. հառաջատարի ներդրումը արևմտահայ հասարակական մտքի և մամուլի ուսումնասիրության բնագավառում: «Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից» (1980) և «Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900)» (1995) աշխատություններն ասվածի խոսուն վկայությունն են:

Արևմտահայ մամուլի և հասարակական

մտքի պատմությունը սերտորեն աղերսվում է օսմանյան գրաքննության իրավական բովանդակությամբ, հիմնահարց, որի առաջին հետազոտողը մեզանում Ա. հառաջատարն է: 1984 թ. նա իրատարակել է «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը 1858-1896» (վավերագրական նյութեր և ծանոթագրություններ) ժողովածուն, 1989 թ.՝ «Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908)» աշխատությունը:

Գիտական երկարատև ուսումնասիրությունների արգասիք է Ա. հառաջատարի՝ 2007 թ. տպագրված «Կոստանդնուպոլսի հայ գաղթաբանը (XV-XVII դարեր)» աշխատությունը: Ուսումնասիրությունը լայն արձագանք գտավ հայրենական և արտերկրի գիտական հասարակայնության շրջաններում: 2009 թ. այս աշխատությունը արժանացավ ՀՀ ԳԱԱ և Ռուսաստանի հայերի միության սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակին:

Ա. հառաջատարը հատուկ ուշադրություն է դարձրել Կ. Պոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների սերտ փոխհարաբերություններին և մասնավորապես Ս. Տեյյաց մեջ հայերի սեփականատիրական իրավունքների պահպանության գործում Ս. Հակոբյան միաբանության բացառիկ կարևորությունը: Իր վերջին հոդվածներում ևս հորեյարը վերստին անդրադարձել է այս հիմնահարցին՝ ընդլայնելով դրա շրջանակները:

2006 թ. Կահիրեում Ա. հառաջատարի հեղինակակցությամբ, առաջաբանով ու խմբագրությամբ (խմբագրակցությամբ պ. գ. դ. Լիդա Գևորգյանի) լույս տեսավ հայ մամուլի պատմության մեջ իր ընդգրկումներով և գիտավերլուծական խորությամբ անմիաբան «Հայ պարբերական մամուլի պատմություն» երկհատորյակի I հատորը (XVIII-XIX), իսկ 2017 թ. Երևանում՝ դրա II հատորը (1900-1922 թթ.): Տարիներ շարունակ այս երկհատորյակը փնտրվող դասագրքի դեր է կատարել հանրապետության լրագրության բաժնի ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակության պատրաստած «Հայոց պատմություն» բազմահատորյակի տարբեր հատորներում իրենց տեղն են գտել անվանի պատմաբանի՝ «Հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու շարժումները», «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը և նրա համայնական արձագանքները», Կ. Պոլսի ու Զմյուռնիայի հայ գաղթաբանների և արևմտահայ մամուլին նվիրված նրա շարադրանքները:

Ա. հառաջատարը կազմել է «Արևելյան մամուլ» (1871-1909) և «Մեղու» (1856-1865) հանդեսների մատենագիտությունները՝ ծանոթագրություններով ու ցանկերով: Աշխա-

տատար, սակայն Հնդկական աշխատանք է արևմտահայ մամուլի պատմությամբ զբաղվող հետազոտողների համար:

Նշենք նաև, որ «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռահատորի II հատորում (2003) տպագրվել են Ա. հառաջատարի «Կոստանդնուպոլսի» և «Զմյուռնիայի» սովորական հատվածները:

Ա. հառաջատարի վերջին ծավալուն մենագրությունն է «Զմյուռնիայի և Եգեյանի առաջնակի հայկական այլ գաղթաբանները (XVI-XIX դ. I կես)» (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 534 էջ): Բազմաթիվ անտիպ և տպագիր աղբյուրներ՝ հիշատակաբաններ, վավերագրեր, ծեռագիր մատյաններ, մամուլի և հայկական ու օտար բազմաբնույթ աշխատությունների հիման վրա շարադրված այս մենագրությունը լայն ընդգրկմամբ ներկայացնում է Զմյուռնիայի և Եգեյանի առաջնակի հայկական այլ գաղթաբանների պատմությունը XVI դ. մինչև XIX դարի առաջին կեսը:

Անվանի պատմաբանն ավելի քան 200 գիտական հոդվածների, հրապարակումների, գրախոսականների հեղինակ է, ունի նաև շուրջ 100 հանրագիտարանային հոդվածներ, գիտական, հասարակական-քաղաքական տասնյակ մենագրությունների ու ժողովածուների խմբագիր է:

Մեր հորեյարը մանկավարժական-դասախոսական աշխատանքի ավելի քան 50-ամյա կենսագրություն ունի: Ա. հառաջատարը տարիներ շարունակ եղել է գիտական մի շարք խորհուրդների անդամ: Բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել, մասնակցել է հայագիտական միջազգային մի շարք գիտաժողովների:

Ա. հառաջատարն իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ բարոյությամբ, կամեցողությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով և անմիջականությամբ մեծ հեղինակություն է վայելում գիտական-մտավորական ու ընկերական միջավայրում:

Վաստակաշատ հայագետն իր հորեյարը դիմավորում է երիտասարդական ավյունով, սքափ և առույգ մտքով: Մեր ավագ գործընկերը՝ գիտության անխոնջ մշակ Ա. հառաջատարին, ցանկանալով արևելատություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Անուշավան ԶԱՔՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
Ստյոպա ՊԵՏՅՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Վալերի Բրյուսովի գրական ժառանգությունը և ներդրումը հայ պոեզիայի թարգմանության ու հանրահռչակման գործում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Գրականագիտական և մշակութաբանական փոխադարձությունների խնդիրները համընդհանրացման դարաշրջանում» միջազգային գիտաժողով՝ նվիրված ռուս պոետ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, գրականագետ, պատմաբան Վալերի Բրյուսովի մահվան 100-րդ տարելիցին:

Վալերի Բրյուսովը թարգմանել է հայ պոեզիայի՝ հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարը ներկայացնող 170-ից ավելի գործեր: Նա խորապես ուսումնասիրել է հայոց պատմությունը ու մշակույթը և անկեղծացել. «Հայաստանի ուսումնասիրության մեջ ես գտա վեհ, հոգեկան հրճվածքի մի անսպառ աղբյուր, որ որպես պատմաբան, որպես գիտության մարդ՝ ես Հայաստանի պատմության մեջ գտա մի ամբողջ ուրույն աշխարհ, որտեղ բարդ հարցերը բորբոքում էին գիտական հետաքրքրություն, իսկ որպես բանաստեղծ, որպես արվեստագետ՝ Հայաստանի պոեզիայի մեջ տեսա մինչև այդ ինձ անհայտ տիեզերական գեղեցկություն, որի մեջ փայլում ու շողշողում էին իսկական գեղարվեստական ստեղծագործության բարձր կերտվածքներ»:

1916 թվականին Մոսկվայում Վալերի Բրյուսովի ջանքերով լույս տեսավ «Поэзия Армении» ժողովածուն, որի համար 1923 թվականին նրան շնորհվեց Հայաստանի ժողովրդական բանաստեղծ պատվավոր կոչումը:

«Բոլորը գիտեն՝ ով է Վալերի Բրյուսովը, ինչ ներդրում ունի մեր ժողովուրդների հունամիտար կապերի զարգացման գործում: Հայ ժողովրդի համար ողբերգական 1915 թվականին Բրյուսովի և նրա կողմնակիցների կողմից այդպիսի քա-

լը շատ կարևոր էր: Դա տվեց իմպուլս նրա հոգեկան զարգացմանը, նա դա խոստովանել է: Վերջնարդյունքում ունենք գրական հարուստ ժառանգություն, որը, ի թիվս այլ ձեռքերումների, Բրյուսովի անունն անմահ դարձրեց», - նշեց Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը՝ ընդգծելով, որ հայ և ռուս ժողովուրդների փոխհարաբերությունները հունամիտար գիտության ոլորտում շատ խոր պատմություն ունեն:

Վալերի Բրյուսովի գրական ժառանգությունը և նրա մեծ ներդրումը հայկական պոեզիան աշխարհին ծանոթացնելու գործում արժևորեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը. «Տարբեր ժողովուրդների միջև գրականագիտական, մշակութաբանական առնչությունները չափազանց կարևոր են, ինչը, ցավոք, այսօր պակասում է: Ամերիկայում է ըմբռնվել, առանձնակի նշանակություն տալ նրան, թե ինչպես կատարելագործել առանձին ժողովուրդների մշակութաբանական, գրական առնչությունների կառուցակարգերը, այն հաշվով, որ մարդիկ դառնան միմյանց ավելի լավ ճանաչող և սովորեն ապրել համերաշխության մեջ»:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Հերիքմազ Ռոսկանյանը նշեց. «Բրյուսովն այն քիչ գիտնականներից էր, որ կարողանում էր կարդալ իրն ձեռագրերը, բացել հայկական պոեզիայի հայ ոգու զանազանը: Անգանհատելի է Բրյուսովի ներդրումը ռուս-հայկական գրական-հասարակական կապերի զարգացման, Ռուսաստանում հայ մշակույթի հանրահռչակման գործում»:



Ռուսաստանի ԳԱ Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի տնօրեն Վադիմ Պոլոնսկին իր ուղերձում կարևորեց ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ համագործակցությունը և նշեց, որ գիտաժողովը նոր խթան է այդ համագործակցության շարունակական զարգացման համար:

Ելույթներ ունեցան ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բնագրագիտության բաժնի վարիչ Ավիկ Իսահակյանը, ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Զաքարյանը: Զեկուցումներով հանդես եկան բանասերներ, գրականագետներ, պատմաբաններ Հայաստանից և Ռուսաստանից:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, Ռուսաստանի ԳԱ Մաքսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Վերջին շրջանում Հայաստանի բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների ոլորտները կրկին ուշադրության կենտրոնում են՝ ակադեմիական քաղաք, գիտնականների ատեստավորում, բուհերի միավորում և այլն: Այս վիճակը, որպես կանոն, զնահատվում է որպես ողբալի և անհապաղ փոփոխությունների ենթակա: Նման բարեփոխումների և դրանց հնարավոր հետևանքների մասին մտածելիս օգտակար է դիմել մեզ նման երկրների փորձին, որտեղ նմանատիպ փոփոխություններ արդեն իսկ իրականացվել են: Այդպիսի օրինակ կա՝ հարևան Վրաստանը, որտեղ արդեն իրականացվել են համապատասխան փոփոխություններ, և, ըստ այդմ, արդեն կարելի է խոսել արդյունքների մասին:

Մոդելի ռազմավարական ընտրություն

Վրաստանի բարեփոխումներն այս ոլորտներում, ըստ էության, գիտության և

կրթության կազմակերպման անգլո-սաքսոնական մոդելն իր ամերիկյան տարբերակով վերարտադրելու փորձ էին: Մյուս մոդելները, օրինակ՝ մայրցամաքային եվրոպայում հաջողությամբ գործողները, բարեփոխումների գործընթացում գործնականում հաշվի չեն առնվել:

ԽՍՀՄ-ում (և, հետևաբար, Հայաստանում ու Վրաստանում) գիտության և կրթության կազմակերպման համակարգն առավելապես ստեղծվել է եվրոպական, հիմնականում գերմանական մոդելի համաձայն, և, հետևաբար, պատմականորեն այն շատ ավելի մոտ է Ֆրանսիայում և Գերմանիայում այսօր գոյություն ունեցող համակարգերին: Բացի այդ, լուրջ կասկածներ կան, որ ամերիկյան մոդել-

ը որոշում են եկեղեցի կառուցել, ապա այն կառուցում են միասին՝ զումար նվիրաբերելով այդ նպատակով ստեղծված հիմնադրամին, մինչդեռ ֆրանսիացիները նույն իրավիճակում առաջին հերթին զրույն են պետական մարմիններին՝ Փարիզ, և իշխանություններից պահանջում հոգ տանել այդ խնդրի մասին:

Մյուս գործոնն ամերիկյան հարկային օրենսդրությունն է, որ խրախուսում է բարեգործությունը: Փաստորեն խոշոր հարկատուներին ընտրության հնարավորություն է տրվում՝ պետությանը փոխանցելու իրենց հարկերը տնօրինելու իրավունքը կամ ինքնուրույն տնօրինելու դրանք՝ ուղղակիորեն փոխանցելով համապատասխան զումարը սոցիալական խնդիրների լուծմանը, այդ թվում՝ գիտությանը և կրթությանը: Չարմա-նալի չէ, որ շատերը նախընտրում են երկրոր-

կեցման բազմաթիվ հարցեր դեռևս լուծված չեն:

Վերջապես, ամերիկյան կրթական համակարգի հաջողությունը եվրոպականի համեմատությամբ այնքան էլ ակնհայտ չէ, որքան սովորաբար ենթադրվում է: Նման հաջողության կարևոր (եթե ոչ հիմնական) չափանիշը բավականաչափ հայտնի գիտնականներ և լավ դասախոսներ կրթելու կարողությունն է, որոնք ապահովում են ոչ միայն գիտության բարձր մակարդակը, այլև կրթական համակարգի ինքնավերարտադրումը: Թվում է՝ եթե ամերիկյան համալսարանները զգալիորեն գերազանցում են այլ երկրների համալսարաններին, ապա նրանց դասախոսները մեծ մասամբ պետք է լինեն այս լավագույն համալսարանների շրջանավարտներ: Իրականում իրավիճակը բոլորովին այլ է: Ամերիկյան

Գիտակրթական ոլորտի վարժացման ո՞ր ուղղությունը պետք է ընտրի Հայաստանը

ը, ընդհանուր առմամբ, կարող է աշխատել ամերիկյան հասարակությունից դուրս և փոխադաստիարակվել օտար հողի վրա՝ ոչ միայն հետխորհրդային, այլև նույնիսկ արևմտաեվրոպական: Ամերիկյան համակարգի արդյունավետությունը պայմանավորված է առաջին հերթին այն համագումարով, որ այն հիմնված է մասնավոր նախաձեռնության և մասնավոր ֆինանսավորման վրա. ամերիկյան լավագույն համալսարաններն ու հետազոտական կենտրոնները մասնավոր են, և նույնիսկ պետականներում մասնավոր ֆինանսավորման չափն զգալի է: Ընդ որում բյուջեի զգալի մասը կազմում են ոչ թե հենց բուհերի վաստակած զումարները, այլ հովանավորների նվիրատվությունները կամ այդ նվիրատվությունների ներդրումներից ստացված եկամուտները: Այս համակարգը հիմնված է նախառաջ սեփական ուժերին ապավինելու մտածելակերպի վրա: Այսպես, օրինակ, եթե ամերիկյան որևէ գյուղի բնակիչներ-

ը: Եվրոպական երկրներում նման բան չկա, ուստի հիմնարար հետազոտությունների համար մասնավոր զումարներ ներգրավելու բազմակի փորձերը միշտ անհաջող են եղել. մասնավոր ֆինանսավորումն էական դեր է խաղում միայն կիրառական ոլորտներում: Մայրցամաքային եվրոպայում, ներառյալ հետխորհրդային երկրները, և կրթությունը, և գիտական հետազոտությունները հիմնականում ֆինանսավորվում են պետության կողմից, և սա, իհարկե, որոշիչ տարբերություն է: Դա կապված է հասարակության կառուցվածքային տարբերությունների և պատմականորեն ձևավորված համապատասխան մտածելակերպի հետ: Բացի այդ, ամերիկյան մոդելների վրա կենտրոնացումն ի վնաս եվրոպականների հակառակ է հետխորհրդային երկրների մեծ մասի մասնակցությանը Բոլոնիայի գործընթացին, որի նպատակը եվրոպական կրթական համակարգերի համախմբումն է, չնայած այն հանգամանքին, որ ներդաշնա-

լավագույն համալսարանների շատ դասախոսներ կրթություն են ստացել եվրոպայում և ժամանել են Միացյալ Նահանգներ արդեն որպես կայացած և հայտնի գիտնականներ: Վերջերս, օրինակ, ԱՄՆ գիտությունների ակադեմիայի նախագահը հանդես գալով այդ երկրի գիտության վիճակի մասին զեկույցով, նշել էր, որ այն էապես կախված է «դրսի» գիտնականներից: ԱՄՆ-ի՝ գիտության ոլորտում ընդգրկված գիտական աստիճան ունեցող արտասահմանցի աշխատակիցները 43% են կազմում: ԱՄՆ-ի որոշ հետազոտական կենտրոններում նույնիսկ ավելի շատ օտարերկրացիներ կան, քան ամերիկացիներ: Բնականաբար դրանք ոչ թե ամերիկյան, այլ եվրոպական կրթական համակարգի արդյունք են, իսկ վերջին շրջանում նաև առավելապես Դոկլաստանից ու Չինաստանից եկածներ: Ամերիկյան գիտության հաջողությունը պայմանավորված է կրթության և գիտության ոլորտների հարստությամբ՝ >5

Ընդունվեց միասնական հռչակագիր հայկական պարամամշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ

Ս/ք. օգոստոսի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրները հետխորհրդային շրջանում» թեմայով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էր «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը: Գիտաժողովին մասնակցեցին մասնագետներ Գերմանիայից, Լեհաստանից, Լիտվայից, Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը նշեց, որ այսօր մեր տարածաշրջանում իրականացվում է պատմական իրադարձությունների, փաստերի կեղծման, ձևափոխման կազմակերպված քաղաքականություն: «Փորձ է արվում յուրացնել, օտարել հատկապես տեղաբնիկ ժողովուրդների պատմությունն ու մշակույթը: Կարծում են՝ դա միայն պարզ կեղծարարություն չէ, այլ նաև քաղաքակրթական արժեքների դեմ իրականացված հանցագործություն, փորձ՝ ձևախեղելու նաև սերունդների հիշողությունը, պատմական ժառանգությունը: Գիտաժողովի խնդիրներից մեկն է նաև վեր հանել նման դեպքերը»,- ասաց Ռոբերտ Ղազարյանը:

Նա հատուկ ուշադրություն հրավիրեց Ադրբեջանի պետական քաղաքականության վրա, որը միտումնավոր ոչնչացնում և աղավաղում է Արցախի հայկական մշակութային ժառանգությունը: «Ադրբեջանի հակաիսլամ քաղաքականությունն ու մշակութային վանդալիզմն իր դրսևորումներն է ունեցել նաև խորհրդային տարիներին: Այսօր նմանատիպ գործընթացներ տեղի են ունենում նաև Արցախի օկուպացված տարածքներում»,- ասաց Ռոբերտ Ղազարյանը:

«Օրբելի» վերլուծական-հետազոտական կենտրոնի համակարգող Միքայել Յալանուզյանը նշեց. «Հայաստանի հակառակորդները ֆիզիկական ոչնչացումից ու նվաճումից բացի ջանք չեն խնայել և հիմա էլ չեն խնայում կեղծելու, խեղաթյուրելու հայոց պատմությունն ու մշակույթը՝ հիմնալի հասկանալով, որ անցյալի մշակութային շերտերի կորուստը հանգեցնելու է ինքնության խեղման նաև ներկայի: Մենք նույնպես պետք է կրկնապատկենք մեր ջանքերը հայ ժողովրդի մշակութա-

յին ժառանգության ուսումնասիրության և պաշտպանության գործում»:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարանի տնօրեն Կարեն Փախլանյանը նշեց. «Նախկին խորհրդային հանրապետությունները հայտնվեցին մի իրավիճակում, երբ կարիք ունեցան վերանայելու իրենց մշակութային ժառանգության առաջնահերթություններն ու մարտահրավերները: Որոշ հանրապետություններ փորձեցին վերափմաստավորել իրենց մշակութային արժեքները հիմնականում հարևանների հաշվին»:

Գիտաժողովի ժամանակ զեկույցումներով հանդես եկան Հրանուշ Խառատյանը (Հայաստան), Մամուշար Գուլցաձեն (Վրաստան), Միխայիլ Իլչենկոն (Գերմանիա), Ռուբեն Գալչյանը (Հայաստան), Ադամ Պոմիչենսկին (Լեհաստան), Շահբան Խապիզովը (ՌԴ), Թամազ Գոգուլաձեն (Վրաստան), Աշխուհ Պողոսյանը (Հայաստան) և այլք:

Գիտաժողովի արդյունքներով ընդունվեց միասնական հռչակագիր, որում նշված է. «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի կազմակերպած «Պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրները հետխորհրդային շրջանում» միջազգային գիտաժողովի մասնակիցներս, քննարկելով գիտաժողովի ընթացքում բարձրացված խնդիրները, հասկանալով մշակութային ժառանգության կարևորությունն ազգային ինքնության, պատմական հիշողության ու մշակույթի իրավունքի իրացման տեսանկյունից, հայտարարում ենք հետևյալը.

1. Հիմնված հավամարտությունների ժամանակ պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը կարևորագույն խնդիրներից մեկն է: Պատմամշակութային ժառանգությունը ոչ միայն անցյալի վկայությունն է, այլև ժողովուրդների ինքնության, արժեքների և հավաքական հիշողության կարևոր բաղադրիչը: Հիմնված հավամարտությունների ժամանակ մշակութային ժառանգությունը ոչնչացման, կողոպուտի և վանդալիզմի թիրախ է դառնում: Մշակութային ժառանգության թիրախավորումը հարված է էթնիկ և մշակութային ինքնությանը:

2. Արցախի հայկական ժառանգության դեմ ուղղված ներկայիս սպառնալիքները:

Հայկական մշակութային ժառանգությունն Արցախում վտանգված է: Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և պատերազմից հետո Ադրբեջանը պետական մակարդակով միտումնավոր ոչնչացնում և աղավաղում է Արցախի հայկական մշակութային ժառանգությունը, որի փաստագրական ապացույցները՝ տեսանյութեր, նկարներ, հայտարարություններ, պարբերաբար հայտնվում են սոցիալական տարբեր հարթակներում, գիտավերլուծական տարբեր իրատարակություններում: Ադրբեջանի հակահայ քաղաքականությունն ու մշակութային վանդալիզմը հայկական ժառանգության հանդեպ չեն սկսվել 2020 թվականի պատերազմի ընթացքում. ունեն շուրջ մեկդարյա պատմություն: Սկսած խորհրդային տարիներից՝ Ադրբեջանը խորհրդային կենտրոնական իշխանությունների թողտվությամբ ոչնչացրել է հայկական բազմաթիվ եկեղեցիներ: Հակահայ քաղաքականության մտյառահեղ դրսևորումը 2005-2006 թվականներին Ջուլայի հայկական գերեզմանոցի ամբողջական ոչնչացումն էր իր հազարավոր ինքնատիպ խաչքարերով և տապանաքարերով:

Մենք՝ գիտաժողովի մասնակիցներս, ահազանգում ենք Արցախի օկուպացված տարածքներում հայկական մշակութային ժառանգության սպառնալիքներին և պաշտպանության անհրաժեշտության խնդիրների մասին: Ադրբեջանը խախտում է միջազգային նորմերն ու կոմվենցիաները՝ ներառյալ՝ «Հիմնված հակա-մարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոմվենցիան և այդ նույն Կոմվենցիայի երկրորդ արձանագրությունը (1999 թ.):

3. Կոչ միջազգային կազմակերպություններին:

Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանը, ներառյալ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին, Միավորված ազգերի կազմակերպությանն ու մշակութապահպան այլ կառույցներին, չքավարալվել միայն դատապարտող կոչերով ու իրորորներով կամ անտարբեր վերաբերմունք ցուցաբերել, այլ զսպող մեխանիզմների կիրառմամբ կանխարգելել հայկական ժառանգության բռնա-յուրացման քաղաքականությունը:

4. Պահպանություն, փաստագրում և փաստաթղթավորում:

Մենք ընդգծում ենք նաև մշակութային ժառանգության փաստագրման, հաշվառման և փաստաթղթավորման կարևորությունը՝ որպես վտանգի տակ գտնվող ժառանգության պաշտպանության կենսական գործիք:

Գիտաժողովում ընդգծված իունամիտար գիտությունների թվայնացված նյութերի օգտագործումը կարևոր դեր է խաղում պատմական տվյալների պահպանման և դրանք ապագա սերունդներին մատչելի դարձնելու գործում:

Մենք կոչ ենք անում նաև ակադեմիական հաստատություններին, բուհական կառույցներին և մշակութապահպան կազմակերպություններին համագործակցել՝ ստեղծելու և տարածելու թվային արխիվներ, որոնք կարող են ծառայել որպես մշակութային հիշողության պահպանության միջոցներ:

5. Քաղաքական և իրավական շրջանակների պաշտպանություն:

Կոչ ենք անում ազգային և միջազգային մակարդակներում ուժեղացնել մշակութային ժառանգության պաշտպանության իրավական շրջանակները: Նա: Սա ներառում է նաև իրավական գործիքների մշակման և ժառանգության պաշտպանության մոր մեխանիզմների կիրառում:

Ամփոփելով «Պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրները հետխորհրդային շրջանում» միջազգային գիտաժողովի արդյունքները՝ գիտաժողովի մասնակիցներս ընդգծում ենք, որ պատմական և մշակութային ժառանգության պաշտպանությունը համամարդկային պարտականություն է:

Կոչ ենք անում Ադրբեջանի իշխանություններին հետևել իրենց իսկ կողմից ստորագրված միջազգային կոմվենցիաներին, հռչակագրերին և դրանցից բխող պարտավորություններին, այն է՝ պահպանել իրենց վերահսկողության տակ գտնվող մշակութային ժառանգության իսկությունն ու անխաթարությունը՝ անկախ էթնիկ և կրոնական պատկանելություններից»:

ՀՀ ԳԱՍ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Գիտակրթական ոլորտի պարզացման ո՞ր ուղղությունը պետք է ընտրի Հայաստանը

➤4 շատ փողով: Ամերիկյան խոշորագույն համալսարանները, մասնավոր ֆինանսավորման շնորհիվ, շատ ավելի հարուստ են, քան եվրոպականները և կարող են առաջարկել ավելի լավ վարձատրություն, ավելի լավ աշխատանքային պայմաններ և ավելի մեծ հնարավորություններ:

Ակադեմիայի բարեփոխում

Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ-ում հիմնարար հետազոտությունների մեծ մասը կենտրոնացած էր Գիտությունների ակադեմիայում, և համալսարանական գիտնականները շատ ավելի քիչ հնարավորություն ունեին դրանով զբաղվելու: Այս համակարգն են ժառանգել հետխորհրդային երկրները և պարբերաբար քննադատվել՝ արևմտյան փորձին անընդհատ հղումներով: Առաջին հերթին նկատի են ունենում ամերիկյան փորձը, որտեղ շատ քիչ են զուտ գիտահետազոտական հաստատությունները, և գրեթե բոլոր հետազոտությունները կատարվում են համալսարաններում:

Վրաստանում փորձ արվեց կրկնօրինակել ամերիկյան այս մոդելը. գիտահետազոտական ինստիտուտներն ու կենտրոններն իրենց ունեցվածքի հետ միասին հանվեցին Գիտությունների ակադեմիայի ենթակայության: Ակադեմիան վերածվեց ավելի շատ խորհրդաճշակման, գիտության կառավարման մեջ էական նշանակություն չունեցող գիտնականների «ակումբի»: Նախկին ակադեմիական հաստատությունները ներառվեցին այլ հաստատությունների՝ հիմնականում համալսարանների կառուցվածք: Վերակազմավորումն ուղեկցվեց զանգվածային կրճատումներով. որոշ գիտահետազոտական ինստիտուտների աշխատողների թիվը կրճատվել է ավելի քան 5 անգամ: Անձնակազմի ցանկացած կրճատում կատարելիս սովորաբար ենթադրվում է, որ «բալաստը» պարապ կամ լավ ցուցանիշներ չցուցաբերող գիտնականները, դուրս կմնան, իսկ լավագույնները կպահպանվեն: Իրականում, սակայն, դա երբեք տեղի չի ունենում. որքան էլ մեծ լինի կրճատումը, մի քանի տարի անց պարզվում է, որ «բալաստը» կրկին առկա է գիտության ոլորտում: Իհարկե, լավագույն հետազոտողները նույնիսկ նման կրճատումների դեպքում անգործ չեն մնում, բայց հետազոտությունների հաջող զարգացման համար բավարար չէ մի քանի ականավոր գիտնական ունենալը: Նրանք կարող են աշխատել և, որ ամենակարևորն է, վերարտադրել իրենց տեսակը միայն մի միջավայրում, որտեղ ընդգրկված են և՛ երկրորդ, և՛ երրորդ «կարգի» հետազոտողներ:

Վրաստանում կատարված «բարեփոխման» արդյունքներն են. զգալիորեն նվազել է գիտության ոլորտում զբաղվածների թիվը, ըստ այդմ՝ կրճատվել է հետազոտությունների ծավալը, փակվել են մի քանի տասնամյակների ընթացքում ձևավորված բազմաթիվ ծրագրեր ու գիտական ոլորտներ: Մնացած ոլորտներում կատարվող հետազոտությունների որակը չի փոխվել, ինչը զարմանալի չէ. դրանք նույն հետազոտողներն են իրականացնում (այլը պարզապես չկան): Ընդհանուր առմամբ այս բարեփոխումը հաջողված կարելի է համարել միայն հարկաբյուջետային տեսանկյունից, այսինքն՝ հետազոտությունների կրճատման արդյունքում կրճատվել է նաև պետական բյուջեից դրանց ֆինանսավորումը: Ամերիկյան մոդելը կրկնօրինակելու փորձն այս դեպքում իսկական աղետի է համագեցրել, որովհետև լրիվ անտեսվել է այն երկրների փորձը, որտեղ մեծ դեր ունեն զուտ հետազոտական հաստատությունները:

Ֆրանսիայում Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնը (CNRS) նույն դիրքն է զբաղեցնում, ինչ ԽՍՀՄ-ում Գիտությունների ակադեմիան կամ հետխորհրդային երկրներում՝ Ազգային ակադեմիաները: Այն զուտ գիտահետազոտական հաստատություն է, որն ունի մոտավորապես 30 հազար աշխատակից: Ճիշտ է, կառուցվածքը մի քիչ այլ է. CNRS-ն ունի իր սեփական ինստիտուտները, ինչպես նաև «խառը ինստիտուտներ», որոնցում աշխատակիցների մի մասը տարբեր համալսարանների դասախոսներ են: Գերմանիայում չկա մնամատիպ խոշոր գիտահետազոտական հաստատություն, սակայն կան մի շարք ավելի փոքր հիմնարկներ, որոնց աշխատակիցները զբաղվում են բացառապես գիտահետազոտական աշխատանքներով. դրանք ակադեմիաներն են՝ Դայդելֆերգ, Բավարիա, Բեռլին-Բրանդենբուրգ և այլն, կամ օրինակ՝ Մաքս Պլանկի ընկերակցությունը, որ միավորում է 80 գիտահետազոտական ինստիտուտ: Եթե Ակադեմիայի բարեփոխման նպատակը հետազոտությունների կազմակերպման համակարգի կատարելագործումն է, ապա պետք է առաջին հերթին հաշվի առնել հենց այսպիսի հաջող գործող գիտական հաստատությունների փորձը:

Գիտական աստիճաններ

Ինչպես հայտնի է, անգլո-սաքսոնական երկրներում կա միայն մեկ գիտական աստիճան՝ դոկտոր (PhD), որը համապատասխանում է մեր գիտությունների թեկնածուին: Մայրցամաքային Եվրոպայի երկրների մեծ մասում կա երկու աստիճան՝ դոկտոր (համապատասխանում է մեր թեկնածուին) և հաբի-

լիտացիա (մեր գիտությունների դոկտորին համապատասխան): Դա երկաստիճան «մայրցամաքային» (գերմանական) համակարգն էր, որը ժամանակին փոխառել էր Ռուսաստանը, ապա ժառանգել ԽՍՀՄ-ին: Վրաստանում որոշվել է հրաժարվել ավանդական երկաստիճան համակարգից և անցնել անգլո-սաքսոնական միաստիճան համակարգին: Նախկին թեկնածուներին և դոկտորներին հավասարեցրին միմյանց և սկսեցին բոլորին կոչել դոկտորներ: Միաժամանակ վերացվեց Բարձրագույն որակավորման հանձնաժողովը, և դոկտորի աստիճան շնորհելու իրավունքը փոխանցվեց բուհերին՝ նույնպես արևմտյան մոդելով: Վրաստանում, սակայն, ինչպես Դայաստանում, կան բազմաթիվ բուհեր, որոնց գիտական մակարդակը, մեղմ ասած, բարձր չէ, և այս բուհերը, ինչպես և մյուսները, ստացել են գիտական աստիճաններ շնորհելու իրավունք: Շատ արագ Վրաստանում գիտական աստիճանն ամբողջովին արժեզրկվեց: Վրացի գիտնականները, խոսելով իրենց գործընկերների գիտական աստիճանների մասին, այժմ անպայման նշում են, թե երբ և որտեղից է այն ստացել: Այս բարեփոխման միակ նպատակն էր ընդօրինակել ամերիկյան փորձը, սակայն արդյունքը եղավ գոյություն ունեցող, թեկուզ թերի, որակավորման համակարգի իսպառ ոչնչացումը:

Միջազգային վարկանիշներ

Բարեփոխումների սկզբում (ինչպես Դայաստանում հիմա է) Վրաստանում շատ էր խոսվում բուհերի վարկանիշների, հեղինակների մեթոդներին ինդեքսների մասին և այլն: Սակայն շատ արագ այդ խոսակցությունները դադարեցին, և այժմ վարկանիշներն այլևս հաշվի չեն առնվում: Սա մասամբ բացատրվում է դրանցում վրացական (ինչպես նաև հետխորհրդային այլ) բուհերի ցածր դիրքով, մասամբ էլ հենց վարկանիշների անկատարության գիտակցմամբ: Մեկ անգամ չէ, որ նշվել է, որ դրանց կազմելու սկզբունքները մշակվել են՝ հաշվի առնելով ամերիկյան և բրիտանական համալսարանների առանձնահատկությունները, և ակնհայտորեն չափեկան դիրքում են դրանք դրել՝ առանց հաշվի առնելու եվրոպական համալսարանների առանձնահատկությունները: Բացի այդ, դրանք կիրառելի չեն բոլոր գիտական ոլորտների համար, օրինակ՝ հումանիտար:

Բավական է ասել, որ մատենագիտական տվյալների բազաները, ինչպիսին է Web of Science-ը, հաշվում են գրեթե բացառապես անգլիալեզու ամսագրերը: Այլ լեզուներով, այդ թվում՝ գերմաներեն և ֆրանսերեն (էլ չասենք՝ հայերեն կամ վրացերեն), հոդվածներ

տպագրող ամսագրեր գրեթե չկան: Այս լեզուներով հրապարակումների անտեսումն անճանաչելիորեն աղավաղում է պատկերը: Բացի դրանից, համապատասխան շտեմարաններում հաշվի չեն առնվում մենագրությունները, որոնք հումանիտար գիտություններում մնում են գիտական արդյունքների հրապարակման հիմնական միջոցը:

Եվրոպական համալսարանների համար, որտեղ կրթությունն անվճար է, վարկանիշում տեղն այնքան էլ կարևոր չէ և միայն հեղինակության, այլ ոչ թե գոյատևման խնդիր է, և նրանք պատրաստ չեն այդքան զուսմար ծախսելու և ջանք թափելու վարկանիշների միջոցով գովազդի վրա: Ուստի Վրաստանում վարկանիշների վրա կենտրոնացնելու մերժումը միանգամայն խելամիտ է և համապատասխանում է համաեվրոպական միտումին: Դայաստանը նույնպես պետք է հրաժարվի այսօրինակ ֆետիշացումից:

Ընդհանուր առմամբ Վրաստանում իրականացված բարեփոխումները, իմ կարծիքով, չիսսան նպատակին, եթե այդ նպատակը բարձրագույն կրթության և գիտահետազոտական վիճակի արմատական բարելավումն էր: Չախճուման հիմնական պատճառը Վրաստանում ամերիկյան համակարգը կրկնօրինակելու փորձն էր: Արդյունքն իմիտացիա է, որն իր տեսքով մնան է բնօրինակին, բայց չի աշխատում այնպես, ինչպես օրիգինալն է աշխատում:

Դայաստանի համար Վրաստանի օրինակը շատ ուսանելի է: Իհարկե, կրթության և գիտության ոլորտում բարեփոխումներն անհրաժեշտ են: Սակայն դրանք իրականացնելիս նախապատվությունը պետք է տրվի գոյություն ունեցող ինստիտուտների կատարելագործմանը, մեծ մասամբ նման եվրոպականին, ռուսականին, այլ ոչ թե դրանց հեղափոխական ոչնչացմանը: Միաժամանակ է հուսալ, որ ավերված ու քանդված հաստատությունները շուտով կփոխարինվեն նորերով, նրանց փոխարեն ոչինչ չի հայտնվի: Մեր դեպքում պետք է հիմնվել առաջին հերթին համանման հասարակության կառուցվածք ունեցող երկրների փորձի վրա: Մեզանում և՛ պետության դերը, և՛ ձևավորված ավանդույթները շատ ավելի խորն են արմատավորված և շատ ավելի մեծ չափով են որոշում հասարակական հարաբերությունները: **Կրթության և գիտության ազատական անգլո-սաքսոնական մոդելը չի աշխատի Դայաստանում, մի՛ շարունակեք:**

Ատոմ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ֆիզմաթ գիտ. թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկան



Այս տարվա դասագրքերի մրցույթում, ինչպես նախորդ տարի, մի շարք առարկաներից հաղթող դասագրքեր չեղան: Այսպես, օրինակ, «Հայոց պատմություն-10» առարկայի դասագրքի ստեղծման հայտ էր ներկայացրել մեկ կազմակերպություն՝ «Հանգակ-97» ՍՊԸ-ն, որի կողմից ներկայացված դասագիրքը, սակայն, չերաշխավորվեց ԿԳՄՍՆ-ի կողմից. համաձայն պաշտոնական պարզաբանման՝ դասագիրքը չի հաղթահարել սահմանված անցողիկ շեմը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը մեզ հետ զրույցում նշեց, թե նախապես ենթադրում էր, որ կարող է դասագրքի իրենց հայտը մերժվել:

Դասագրքի հեղինակային կազմում ընդգրկված են ԳԱԱ պատմության, արևելա-

ՄԵՐԺԵԼՈՎ «ԸԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-10» ԴԱՍԱԳՐՔԻ ԸԱՅՏԸ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԺԵՑ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԸԱՄԱՅՆՔԻՆ

գիտության ինստիտուտների, երևանի պետական համալսարանի և Դայաստանի պետական մանկավարժական համալսարանի մասնագետներ, պատմաբաններ: «Բավական մեծ խումբ, որովհետև պետք է գրվեր հայոց պետականության ամբողջական պատմություն: Աշխատանքը որքան հետաքրքրական էր, նույնքան էլ՝ դժվարին, քանի որ ենթադրում էր հայոց պետականության ամբողջական պատմության շարադրում՝ սկզբից մինչև մեր օրերը: Մենք մասնագիտական ունակությունների խնդիրը խիստ կարևորեցինք, որ յուրաքանչյուր մասնագիտական շրջան պետք է ներկայացնի այն մասնագետը, որը տվյալ դարաշրջանով զբաղվել է, դրա համար էլ ստացվեց մեծ խումբ», - ասում է Ա. Մելքոնյանն ու անդրադառնում նախարարության մերժման փաստին. «Մերժումը հենց տեղադրվեց կայքում, մենք մնալ գրեցինք նախարարություն՝ պարզելու համար, թե ինչն է պատճառը: Արդեն ստացել ենք գրավոր պատասխանը, որտեղ նշված է, որ, ընդհանուր առմամբ, դասագիրքը բավականին հաջողված է, բայց անհրաժեշտ պահանջներին՝ կապված չափորոշիչների, բովանդակության, մեթոդաբանության և մի շարք այլ պայմանների հետ, չի համապատասխանում ու դրա համար մերժվել է»:

Այլ կերպ ասած՝ ընդհանուր ձևակերպումներ և ոչ մի կոնկրետություն. «Այո, եթե, օրինակ, նշվեին կոնկրետ դիտողություններ, ինչպես մենք արեցինք անցած տարի 7-րդ դասարանի հայոց պատմության և այս տարվա 8-րդ դասարանի հայոց պատմության դա-

սագրքերի հետ կապված, որ, օրինակ, այսպիսի փաստական սխալներ կան, այստեղ մեթոդաբանական սխալ կա, այստեղ բովանդակային անհամապատասխանություն և այլն...», բայց մեր դասագրքի դեպքում ոչ մի կոնկրետ դիտողություն չի նշվել՝ ըստ էության, պարբերությունների, ուղղակի ընդհանուր ձևակերպումներով մերժել էին մեր հայտը»: Ինչո՞վ է բացատրում այն հանգամանքը, որ նախարարությունը մերժել է գրեթե ողջ պատմագիտական համայնքի կողմից գրված դասագրքի հայտը, արդյո՞ք այսկերպ ԿԳՄՍՆ-ն պատժում է նույն այն պատմաբաններին, որոնք անցած տարի մեծ աղմուկ բարձրացրել ու նախարարությունից մինչ օրս պահանջում են դպրոցներից հանել 7-րդ դասարանի հայոց պատմության դասագիրքը: «Հեմ բացառում, որովհետև այդ հանգամանքն ակնհայտ է, և նախորդ անգամ 7-րդ դասարանի հայոց պատմության դասագրքի վերաբերյալ 100-ից ավելի պատմաբաններ, հանրապետությունում գրեթե բոլոր ծանաչված մասնագետները ստորագրեցին և պահանջեցին, որ այդ դասագիրքը հանվի շրջանառությունից: Սակայն նախարարությունը որոշեց այդ դասագիրքը պահել շրջանառության մեջ ու մեզ էլ նախատեց, որ մենք միայն քննադատում ենք և չենք մասնակցում մրցույթին՝ նշելով, որ ճանաչված և ոչ ճանաչված մասնագետները միայն քննադատում են, իսկ ինչո՞ւ չեն գրում իրենք... ահա, մենք գրեցինք և տեսանք, թե արդյունքն ինչ եղավ...», - նկատում է Ա. Մելքոնյանը:

Թե ինչ քայլեր են ձեռնարկելու, Պատ-

մության ինստիտուտի տնօրենն ասում է՝ առաջիկայում պետք է հավաքվեն դասագրքի հեղինակային ողջ կազմով և որոշեն իրենց անելիքը. «Մի բան պարզ է, որ 8-րդ դասարանի հայոց պատմության դասագրքի հետ կապված՝ կարծես մոռ սկանդալ է հասունանում, որի հեղինակը դարձյալ Սմբատ Դովհանմիրյանն է: Դասագիրքը սկզբում մերժվել էր, բայց հետո հանկարծ ընդունվել էր ինչ-ինչ բարեփոխումներից հետո: Բայց դասագիրքը փորձաքննած մասնագետները կարծիք էին գրել, որ այն ընդունելի չէ, ավելին՝ թե՛ բովանդակային, թե՛ մեթոդաբանական առումով բավականին սխալաշատ դասագիրք է, ու զարմանալիորեն այն դիտողությունները, որոնք արվել էին հեղինակային խմբի կողմից, հայտնվել են հեղինակի մոտ, որոնք դասագրքում հաշվի են առնվել նրա կողմից: Հիմա մեզ համար շատ տարօրինակ է, որ թե՛ 7-րդ, թե՛ 8-րդ դասարանների հայոց պատմության դասագրքերը միայնակ գրում է մեկ անձնավորություն՝ Սմբատ Դովհանմիրյանը, ով հայոց պատմության մասնագետ էլ չէ, այլ ֆրանսիական անավների դպրոցի մասնագետ է. կա այդպիսի պատմագիտական ուղղություն, որը կարևորում է, այսպես ասած, ժամանակագրական պատմության շարադրանքը: Ես հենց նախարարի ներկայությամբ եմ նրան հարցրել, որ նա, լինելով այս խմբիդների մասնագետը, ինչպե՞ս է համարձակվել միայնակ գրել հայոց պատմության դասագիրք...»:

Սոմա ԱՂԱՍՅԱՆ
«Դրապարակ» օրաթերթ, 21.08.2024

«ԳԱԱ-ում քննարկվեցին սոցիալական և արհեստական ինտելեկտի հիմնախնդիրներն արհեստական բանականության դարաշրջանում»

Ս/թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի նպատակն էր քննարկել արհեստական բանականության ձեռքբերումների ներդրման համատեքստում սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանն ուղղված համատեղ գիտական նախագծերի իրականացման հնարավորությունները, ընդլայնել գիտական համագործակցության աշխարհագրությունը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: Նա նշեց, որ արհեստական բանականությունը, լինելով մարդկային քաղաքակրթության խոշորագույն նվաճումներից մեկը, ընձեռնում է մեծ հնարավորություններ և միաժամանակ ստեղծում ռիսկեր:

«Ամենամեծ ռիսկը գործազրկության առաջացումն է: Մենք գործ ունենք բանական գործողությունների փոխարինման հետ: Որոշ մասնագիտություններ կվերանան, և կառաջանան նորերը, և սա կրթության ոլորտի առջև խնդիր է դնում պատրաստել համապատասխան մասնագետներ: Հաջորդ ռիսկը, որն արդեն նկատելի է, մարդկային մտածողության դեգրադացումն է: Պետք է նաև հաշվի առնել ներքին և արտաքին անվտանգության խնդիրները, որոնք կապված են անձնական տվյալների տարածման, ռազմական անվտանգության հետ», - ասաց Յուրի Սուվարյանը:

Ակադեմիկոս Սուվարյանը նշեց, որ այսօր տնտեսա-



գետներն ունեն խնդիր՝ վերլուծելու և հասկանալու ինչպես կանխել արհեստական բանականության հնարավոր ռիսկերը և օգտվել ընձեռնված հնարավորություններից: «Մեր արտադրանքը պետք է ունենա բարձր որակ, համաշխարհային շուկայում լինի մրցունակ, իսկ դրա համար պետք են գիտական նվաճումներ: Մեր խնդիրն է նպաստել տնտեսության զարգացմանը, որպեսզի սոցիալական և տնտեսական հարցերը կարգավորվեն գիտական մեթոդներով», - ասաց Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ Միջայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Մերի Մամուչարյանը նշեց. «Այսօր մենք կանգնած ենք մոր գլոբալ մարտահրավերների առջև, որոնք պահանջում են համապատասխան մոտեցում և գիտական մոտարարություն: Մեր ինստիտուտն այս ուղղությամբ շատ անելիքներ ունի: Արհեստական բանականության ռիսկերն ու մարտահրավերները ճիշտ կառավարում են պահանջում, և այս միջազգային գիտաժողովը բացառիկ հնարավորություն է՝ կիսվելու փորձով և ստեղծելու համագործակ-

ցության մոր հարթակներ»:

Բելառուսի ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Դենիս Մուխանի խոսքով գիտաժողովը հնարավորություն է ստեղծում՝ սահմանելու թվային տնտեսության և արհեստական բանականության կարևոր խնդիրները և գտնելու դրանց լուծումները: «Թվային տեխնոլոգիաներն ավելի ու ավելի են մտնում հասարակության կյանքի և տնտեսության բոլոր ոլորտները: Մեր խնդիրն է սահմանել այն պայմանները, որոնցով տնտեսությունը պետք է ներդնի և զարգացնի ժամանակակից թվային տեխնոլոգիաները», - ասաց Դենիս Մուխանը:

Ռուսաստանի ԳԱ Սարատովի գիտական կենտրոնի տնօրեն Բորիս Խլեբցովը նշեց՝ պետք է սահմանել լուծումներ՝ ուղղված սոցիալ-տնտեսական զարգացմանը և հասարակական կյանքի որակի բարձրացմանը թվային տեխնոլոգիաների ներդրմամբ:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին շուրջ երեք տասնյակ զեկուցումներ արհեստական բանականության ձեռքբերումների, խնդիրների, մակրոտնտեսական զարգացման միտումների, ֆինանսական քաղաքականության, ժողովրդագրության, տնտեսության զարգացման և այլ հարցերի վերաբերյալ:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Միջայել Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտը, Բելառուսի ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը և Ռուսաստանի ԳԱ Սարատովի գիտական կենտրոնը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



«SHS-2024» միջազգային գիտաժողովը

Ս/թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանի սինթեզ» (self-propagating high-temperature synthesis SHS-2024) միջազգային գիտաժողովը: Այն համախմբել է մասնագետների և հետազոտողների ԱՄՆ-ից, Բելառուսից, Գերմանիայից, Էստոնիայից, Իսպանիայից, Իտալիայից, Կորեայից, Հայաստանից, Հունաստանից, Ղազախստանից, Ճապոնիայից, Շվեդիայից, Չինաստանից, Անգլիայից, Ռումինիայից, Պորտուգալիայից, Ռուսաստանից, Վրաստանից, Ֆրանսիայից:

Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանի սինթեզը (SHS) բացառիկ հատկություններով նյութերն արագ արտադրելու եզակի միջոց է: Այն դարձել է հիմնաքար տարբեր կիրառություններում սկսած առաջադեմ կերամիկայից մինչև էներգետիկ նյութեր:

Գիտաժողովի նպատակն էր ներկայացնել նյութագիտության և սինթեզի տեխնիկայի վերաբերյալ մոր գիտական արդյունքները, վերջին զարգացումները և մարտահրավերները, ինչպես նաև մոտարարական գաղափարների գեներացումն ու համագործակցությունների ձևավորումը:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը՝ շեշտելով այս գիտական ուղղության կարևորությունը, և հաջողություն մաղթեց գիտաժողովի աշխատանքներին:

ԱՄՆ Նոթր Դամի համալսարանի քիմիական և կենսամոլեկուլային ճարտա-

րագիտության պրոֆեսոր Ալեքսանդր Մուկայանը նշեց, որ Հայաստանում գիտաժողովի անցկացման գաղափարն առաջացել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ համագործակցության արդյունքում:

Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանի սինթեզի (SHS) ուղղության զարգացման աշխարհագրությունը լայնանում է. տարեկան 1000 հրապարակում ավելի քան 100 երկրից:

Ինքնատարածվող բարձր ջերմաստիճանի սինթեզի (SHS) ուղղությունը ստեղծվել է 1968-1969 թթ.՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի անդամ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ալեքսանդր Մերժանովի կողմից:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում պրոֆեսոր Մուկայանի հետ համատեղ ստեղծվել է լաբորատորիա, որի նպատակն է զարգացնել ինքնատարածվող բարձր ջերմաստիճանի սինթեզի (SHS) ուղղությունը: Այս ուղղության զարգացումը կարող է Հայաստանի համար ռազմական կարևոր խնդիրներ լուծել:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև սեպտեմբերի 13-ը: Այն կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների, ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի և ՌԴ ԳԱ Ալեքսանդր Մերժանովի անվան կառուցվածքային մակրոկիմետրիայի և նյութագիտության պրոբլեմների ինստիտուտները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Երիտասարդ գիտնականի ամբիոն

Վարդան Ասատրյան

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող Վարդան Ասատրյանը ճանաչվել է «Երիտասարդ գիտնականների աշակցության ծրագրի» շրջանակներում իրականացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման մրցույթի» շահառու՝ «Scimago Journal & Country Ranking» (SJR)-ում ամսագրերի դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ հոդվածի տպագրության համար:

Վարդան Ասատրյանը ներկայացրել է «Revealing Diversity in Gammarus (Amphipoda: Gammaridae) in the Freshwater Ecosystems of Armenia Using DNA Barcoding» հոդվածը: Այն տպագրվել է շվեյցարական «Water» հանդեսում: Աշխատանքում կատարվել է Հայաստանի քաղցրահամ ջրային էկոհամակարգերում ԴՆԹ-ի շտրիխ կոդավորման միջոցով Gammarus ցեղի բազմազանության ուսումնասիրություն: Հոդվածը լույս է տեսել հայ, բելառուս և գերմանացի գիտնականների համահեղինակությամբ:

«Ո՞րն է աշխատանքի գիտական նորույթը» մեր հարցին Վ. Ասատրյանը պատասխանեց. «Հետազոտության օբյեկտը՝ Gammarus ցեղի խեցգետնակերպերը, աշխարհով մեկ տարածված և կրիպտիկ ու էնդեմիկ տեսակներով հարուստ կենդանիներ են, որոնք ունեն ինչպես էկոլոգիական, այնպես էլ աքվակուլտուրային մեծ նշանակություն, քանի որ բազմաթիվ ձկնատեսակների կերային կարևոր բաղադրիչներից են: Սա կայն դրանց տեսակային կազմը և աշխարհագրական առանձնահատկությունները Կովկասյան էկոտարածաշրջանում թույլ են ուսումնասիրված: Վերջին տասնամյակներին Հայաստանից հաղորդվում էր միայն մեկ էվրիբիոնտ տեսակի՝ Gammarus lacustris-ի մասին: Խնդիրն այն է, որ Gammarus-ների ձևաբանական որոշումը խնդրահարույց է և խիստ աշխատատար:

Այդ է պատճառը, որ միտք ծագեց կիրառել ժամանակակից մոլեկուլային մեթոդներ և, համադրելով ձևաբանական մեթոդների հետ, փորձել բացահայտել Հայաստանում այս կենդանիների թաքնված բազմազանությունը: Աշխատանքները մեկնարկեցին 2018 թվականին Մարինե Դալլաբյանի՝ Բոննի Քյոնիգի անվան թանգարան-ինստիտու-



տում եռամսյա վերապատրաստման ծրագրի շրջանակում: Այն ժամանակ ստացված առաջին արդյունքները հիմք հանդիսացան հայ-վրաց-գերմանական համատեղ միջազգային ծրագրի համար: Տպագրված աշխատանքում հստակեցվել է Հայաստանի տարածքում առնվազն 3 տեսակի առկայությունը, և քարտեզագրվել է դրանց տարածվածությունը, բացահայտվել է տեսակներից 2-ի կազմում կրիպտիկ ենթատեսակների մեծ բազմազանությունը:

Ուսումնասիրությունն էական դեր ունի ոչ միայն կենսաբազմազանության բացահայտման և տարածական բաշխման տեսանկյունից, այլև հետաքրքիր նյութ է ամբողջ խմբի էվոլյուցիոն ուսումնասիրությունների համար: Ներկայումս էլ միջազգային մեծ թիմի մասնակցությամբ տպագրության է նախապատրաստվում Կովկասի Gammarus-ների վերաբերյալ ամփոփիչ հոդված:

Վ. Ասատրյանը ասպիրանտական տարիներից ներգրավված է եղել տեղական և միջազգային ծրագրերում, իսկ այժմ ղեկավարում է ՀՀ ԿԳՄՍ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հեռավար լաբորատորիաների հիմնման ծրագիրը և Հայապատրիական APPEAR ծրագրի համադրված է: Երկու ծրագրերն էլ վերաբերում են ջրային էկոհամակարգային ծառայություններին:

Վարդան Ասատրյանը 70 գիտական հրապարակման հեղինակ է: Համախելինակ է 3 գրքերի, 2 ուսումնամեթոդական ձեռնարկների և 1 դասագրքի: Նրա ամուսնվ գրանցված է մտավոր սեփականության վկայական: 13 աշխատանք տպագրված է «Scopus» և «Web of Science» գիտատեղեկատվական շտեմարանների ամսագրերում:

Սոնիկա ԵՐԻՑԱՆ



Խորհրդային Միության բարձրագույն ռազմահրամանատարական համաստեղության ակնառու դեմքերից է մեր հայրենակից, ԽՍՀՄ նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ ՊԸ թղթակից անդամ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս Իվան (Յովհաննես) Ստեփանի Իսակովը (Տեր-Իսահակյան)։

Նա ծնվել է 1894 թ. օգոստոսի 22-ին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի նահանգի Գետաշենի շրջանի (Հյուսիսային Արցախ) Հաջիբեդի գյուղում։ 1913 թ. Ի. Իսակովն ավարտում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, այնուհետև ուսումը շարունակում Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում։ Երբ սկսվում է 1-ին համաշխարհային պատերազմը, Ի. Իսակովը հնարավորություն է ստանում իրականացնելու վաղեմի երազանքը և 1914 թ. սեպտեմբերին ընդունվում է ծովային գարգեմարինների դասընթացը, որը գերազանցությամբ ավարտում է 1917 թ.։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Ի. Իսակովը կամավորագրվում է Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի շարքերը և զինվորական ծառայությունը շարունակում Բալթյան նավատորմում՝ որպես ակնանակրի հրամանատարի տեղակալ։ 1919-1920 թթ. Ի. Իսակովը՝ որպես պահակա-նավի հրամանատար, մասնակցում է Կրոնշտադտի անգլիական ռազմաճակատից պաշտպանելու գործողությանը, ապա որպես Վոլգա-Կասպիական նավատորմի ակնանակրի հրամանատար՝ Էնգելի մարտական գործողությանը Կասպի ծովում։

1923-1929 թթ. Ի. Իսակովը ծառայել է Սև-ծովյան նավատորմում, եղել նավատորմի շտաբի օպերատիվ բաժնի վարիչ, ակնանակրների հրամանատար։ Այնուհետև նշանակվել է կարմիր բանակի գլխավոր շտաբի օպերատիվ բաժանմունքի ծովային սեկտորի պետի պաշտոնում։ 1931-1932 թթ. Ի. Իսակովը եղել է կառավարական գործունեության մեջ Հեռավոր Արևելքում և նպաստել Խաղաղօվկիանոսյան նավատորմի հիմնադրմանը։ Նշենք նաև, որ մինչ այդ Ի. Իսակովը հաջողությամբ ավարտել էր Ռազմածովային ակադեմիայի բարձրագույն հրամանատարական կազմի որակավորման դասընթացները։

Հաշվի առնելով Ի. Իսակովի ընդունակությունները՝ նրան նշանակում են Հաստիկ նշանակության 2-րդ արշավախմբի պետ։ Այդ արշա-

վախմբի ռազմաճակատից մեկի վրա էին գտնվում Ի. Ստալինը, Ս. Կիրովը, Կ. Վորոշիլովը և այլ նշանավոր գործիչներ։ Այստեղ Ի. Ստալինը, առաջին անգամ անձամբ ականատես լինելով Ի. Իսակովի աշխատանքին, ընդունեց նրան, գոհունակությամբ հայտնեց պետական կարևոր նշանակություն ունեցող առաջարկանքը հաջողությամբ կատարելու համար և նրան պարգևատրեց Կարմիր աստղի շքանշանով։

1933 թ. Ի. Իսակովը նշանակվում է Բալթյան նավատորմի շտաբի պետ, իսկ 1937 թ.՝ նավատորմի հրամանատար։ Այդ ընթացքում նա միաժամանակ զբաղվում էր գիտամանկավարժական աշխատանքով, վարում ռազմածովային ակադեմիայի օպերատիվ արվեստի ամբիոնի վարիչի պարտականությունները։ 1936 թ. նա պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն։

1938 թ. Ի. Իսակովին շնորհվում է 1-ին կար-

ի հրամանատարներից մեկը։

1942 թ. ամռանը Ի. Իսակովը նշանակվեց Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ։ Ծովակալը կորորդիանցում էր Սևծովյան նավատորմի գործողությունները Անդրկովկասյան ռազմաճակատի զորքերի հետ։ Չնայած ռազմաճակատի շտաբը գտնվում էր Թբիլիսիում, բայց Ի. Իսակովին հաճախակի կարելի էր տեսնել ճակատամարտի այն վայրերում, որտեղ դրությունը սրվել էր, և օգնություն էր պետք, մշտապես անտեսելով կյանքին սպառնացող վտանգը։ Եվ ահա 1942 թ. հոկտեմբերի 4-ին, երբ ծովակալն ավտոմեքենայով հաղթահարում էր Տուապսեից հյուսիս անցնող Լեռնային ճանապարհը, նրա մեքենան ընկավ հսկառակորդի ռմբակոծիչների հարվածների տակ, որի հետևանքով Ի. Իսակովը ծանր վիրավոր-

կովին շնորհվում է 1-ին կարգի Ստալինյան մրցանակ։

1953 թ. հոկտեմբերին Յովհաննես Իսակովն այցելում է Հայաստան, հանդիպումներ ունենում ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի, կառավարության ղեկավար Անտոն Քոչինյանի, ՊԸ պրեզիդենտ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, հայ պոեզիայի դասական Ավետիք Իսահակյանի, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի հետ, որը նկարում է ծովակալի դիմանկարը։ Այնուհետև Ի. Իսակովը եղել է Եթիոպիայում, հանդիպել Ամենայն Հայոց կաթողիկոս Պարոզ Չորեքչյանին, այցելել Մատենադարան, մեկնել Սևանա լիճ...

1954 թ. օգոստոսի 21-ին ծննդյան 60-ամյակի առթիվ պարգևատրվել է Լենինի շքանշանով, իսկ նույն թվականի սեպտեմբերի 8-ին նշանակվել ԽՍՀՄ ծովային նավատորմի մինիստրի տե-

ԾՈՎԱԿԱԼԸ, ԳԻՏԵՆԱԿԱՆԸ, ԳԻՐՈՂԸ (Ի. Ս. Իսակովի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Գի ֆլագմանի զինվորական կոչում։ Նա պարգևատրվում է Լենինի շքանշանով և նշանակվում ԽՍՀՄ Ռազմածովային նախարարի 1-ին տեղակալ։

1939 թ. Խորհրդա-ֆիննական պատերազմի ընթացքում Ի. Իսակովը կարմիր բանակի գլխավոր հրամանատարության գորակայանի կողմից ուղարկվում է Կրոնշտադտ և ակտիվ մասնակցություն ունենում Բալթյան նավատորմի և Հյուսիսարևմտյան ռազմաճակատի զորքերի համատեղ գործողությունների կազմակերպման գործընթացին ֆիննական ծոցում և Լադոգա լճի շրջաններում։ Զորակայանի առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար 1-ին կարգի ֆլագման Ի. Իսակովը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ 1940 թ. հունիսի 4-ին ԽՍՀՄ Ժողովուրդների որոշմամբ Ի. Իսակովին շնորհվում է ռազմածովային նավատորմի ծովակալի կոչում։ Նույն թվին Ի. Իսակովը համատեղությամբ նշանակվում է «Ծովային ատլասի» պատասխանատու խմբագիր։ Այն ակադեմիական մի վիթխարի աշխատանք էր, որն ուներ գիտական և ռազմական մեծ նշանակություն։

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ծովակալ Ի. Իսակովի՝ զորահրամանատարի անգլոգալան տաղանդն ու կազմակերպչական բարձր ունակությունները դրսևորվեցին նորովի, բացահայտվեցին բազմակողմանի։ Պատերազմի առաջին օրերին ծովակալ Ի. Իսակովն ուղարկվեց Լենինգրադ՝ որպես Հյուսիսարևմտյան ուղղության զորքերի գլխավոր հրամանատար, Խորհրդային Միության մարշալ Կ. Վորոշիլովի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ։ Նա պետք է կորորդիանցեր Բալթյան նավատորմի և Լենինգրադյան ռազմաճակատի գործողությունները։ Ի. Իսակովը զգալի աշխատանք էր տանում Լենինգրադի մատույցները ծովից պաշտպանելու գործում։ Մեծ էր նաև նրա ավանդը Լադոգա լճի վրայով «Կյանքի ճանապարհի» ստեղծման գործում։ Բանակի գեներալ Գ. Ժուկովը, որը 1941 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ստանձնել էր Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարությունը, բարձր է գնահատել ծովային գծով իր տեղակալ Ի. Իսակովի գործունեությունը, նրան համարել Խորհրդային Միության ռազմածովային նավատորմի ամենաուժեղ և տաղանդավոր զորա-

վեց և զրկվեց ձախ ոտքից։ Հոսպիտալներում երկար բուժումներից հետո՝ 1943 թ. մայիսին, ծովակալը վերադառնում է Մոսկվա, անցնում ռազմածովային նավատորմի հրամանատարի 1-ին տեղակալի պաշտոնին, միաժամանակ շարունակում աշխատանքները ռազմածովային գիտության բնագավառում։ «Морской сборник» հանդեսում Ի. Իսակովը տպագրում է մի շարք հոդվածներ, 1944 թ. հրատարակում «Ռազմածովային նավատորմը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» մենագրությունը, շարունակում «Ծովային ատլասի» 1-ին հատորի պատրաստման աշխատանքները։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո ծովակալ Ի. Իսակովը շարունակում է ծառայել որպես ռազմածովային նավատորմի նախարարի 1-ին տեղակալ։ Նշենք, որ նա 1943 թ. առողջության վատանալու պատճառով թողել էր Ծովային գլխավոր շտաբի պետի պաշտոնը։ Հաշվի առնելով Ի. Իսակովի ծառայություններն ու մեծ փորձը Ի. Ստալինը 1946 թ. առաջարկել էր կրկին ստանձնել շտաբի պետի պաշտոնը։ Ռուս գրող Ս. Սմիռնովի վկայությամբ ծովակալը պատասխանել է, որ իր համար ծանր կլինի, քանի որ մի ոտքը չկա։ Ի պատասխան Ստալինը ասել էր. «Ոչինչ, ընկե՛ր Իսակով, եղել են անգլուխներ, որոնց համբերել ենք, առանց ոտքի էլ կիսմբերենք»։ Իսակովը նշանակվում է այդ պաշտոնում, սակայն ոտքի զանգոյնայի պատճառով 1947 թ. փետրվարի 19-ին ստիպված է լինում հրաժարվել պաշտոնից, և նշանակվում է Ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատարի տեղակալ՝ պատերազմի փորձի ուսումնասիրության և օգտագործման գծով։

Նույն թվականին ծովակալը նշանակվում է նաև գիտության և գյուտարարության բնագավառի պետական մրցանակների կոմիտեի անդամ, ընտրվում ԽՍՀՄ Աշխարհագրական ընկերության իսկական անդամ, ՌԽՖՍՀ 2-րդ գումարման գերագույն խորհրդի պատգամավոր։ 1947 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովն Ի. Իսակովին շնորհում է պրոֆեսորի կոչում, իսկ 1948 թ. նշանակում Ռազմածովային գիտությունների էքսպերտ հանձնաժողովի նախագահ։ 1951 թ. «Ծովային ատլասի» 1-ին հատորի համար Ի. Իսա-

ղակալ։ Ռազմածովային ուժերի ստեղծման և ղեկավարման բնագավառում ունեցած ակնառու ծառայությունների համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1955 թ. մարտի 3-ի հրամանագրով Ի. Իսակովին շնորհվում է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում։ ԽՍՀՄ նավատորմի պատմության ընթացքում Ի. Իսակովից բացի այդ բարձր կոչմանն արժանացել են Ն. Կուզնեցովը և Ս. Գորշկովը։

1956 թ. նա նշանակվում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարին առընթեր գիտական խորհրդատու, իսկ 1958 թ.՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսչների խմբի գլխավոր տեսուչ։ Հաշվի առնելով ռազմածովային գիտության բնագավառում Ի. Իսակովի ակնառու նվաճումները՝ 1958 թ. հունիսի 20-ին նա ընտրվում է ԽՍՀՄ ՊԸ թղթակից անդամ, իսկ 1967 թ. մարտի 27-ին՝ ՀԽՍՀ ՊԸ պատվավոր անդամ։ Դեռևս 1963 թ. Ի. Իսակովն ընտրվել էր ՌԽՍՖՀ գրողների միության անդամ։ Նրա գրչին են պատկանում «Պատվածքներ նավատորմի մասին» ժողովածուն, «Ծովային պատմություններ», «Կրոնշտադտյան ազդանշան», «Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում» գրքերը և այլն։

1964 թ. ծննդյան 70-ամյակի առթիվ Ի. Իսակովին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում։ Հայրենիքը բարձր է գնահատել ծովակալի ծառայությունները և նրան պարգևատրել Լենինի 6, Կարմիր դրոշի 3, Ուշակովի 1-ին աստիճանի 2, Կարմիր աստղի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով։

Ի. Իսակովը մահացել է 1967 թ. հոկտեմբերի 11-ին Մոսկվայում։ Փառապանծ ծովակալի անունով ռազմաճակ է կոչվել, Սանկտ Պետերբուրգում և Երևանում քաղվել են փողոցներ ու թանգարաններ։ ՀՀ կառավարությունը հիմնադրել է «Ծովակալ Իսակով» մեդալը, Երևանի թիվ 132 հիմնական դպրոցը անվանակոչվել է նրա անունով։ Մեր լեզուները հայրենակցի պատվին Երևանում տեղադրվել է հույակերտ հուշարձան նրա անունը կրող պողոտայում։

Կլիմենտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ՊԸ պատմության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, պատմական
գիտությունների դոկտոր

ՄԵՐ ՀԱՅՏՆԻ ՌԷ ԱՆՀԱՅՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ

Առանց Արթ Լաբոյի Հայնի...

1943-2022 թթ.՝ 79 տարի շարունակ, միլիոնավոր ամերիկացի ռադիոլսողներին ուրախություն և դրական լիցքեր է շնայել Արթ Լաբո անունով մի հայազգի դիջեյ։ Տասնամյակներ առաջ, երբ հեռահաղորդակցության միջոցները զարգացած չէին, միմյանցից հեռու գտնվող սիրող սրտերը, մասնավորապես բանտարկյալներն ու նրանց հարազատները կապ էին հաստատում նաև ռադիոյի միջոցով խնդրելով սիրելիի համար հաղորդել այս կամ այն երգը։ Տասնյակ սերունդներ են մեծացել հայազգի դիջեյ, երգահան, ծայնագրող-արտադրիչ և ռադիոկայանի տնօրեն Արթուր Էգոնյանի Արթ Լաբոյի երաժշտությանը...

Արթուր Էգոնյանը ծնվել է 1925 թ. օգոստոսի 7-ին Յուբա նահանգի կենտրոն Սոլթ Լեյք Սիթիում։ Սթանֆորդի համալսարանում ուսանել է ռադիոյի ճարտարագիտություն։ Ավարտելուց հետո Արթուր Էգոնյանը ծառայել է Սան Ֆրանցիսկոյի ծովածոցում տեղափոխված նավատորմում՝ Գանձերի կղզի կոչվող կայանի ազդանշանային կորպուսում, որն օգնել է նրան հաղորդի իր աշխատանքում։ Տասնութ տարեկանում Արթուրը մուտք է գործել պրոֆեսիոնալ ռադիո, աշխատանք է խնդրել Սան Ֆրանցիսկոյի KSAN կայանում՝ առանց հստակ պատկերացնելու իր անելիքը։ Պատերազմը ռադիոկայանը զրկել էր տեխնիկներից, իսկ Արթուրն ուներ ռադիոսպարտորի վկայական։ Այս ռադիոկայանի ղեկավարն էլ նրան հորդորել է իր ազ-

գանունը դարձնել Լաբո...

Արթ Լաբոն նորարար էր։ Նրա մտահղացումն էր պատվերների գաղափարը ռադիոյի եթերում՝ երեկոյան հեռարձակելով ծայնագրություններ՝ հիմնված ունկնդիրներից ստացած նամակների և հեռախոսազանգերի խնդրանքների վրա։ Հաճախ Լաբոն հեռախոսազանգերին պատասխանել է հենց ուղիղ եթերում, ինչն այսօր թվում է ավելի քան սովորական, սակայն ժամանակին միանգամայն նորություն էր։ Նա նաև առաջինն է դուրս եկել ստուդիայից և ուղիղ եթեր մտել, օրինակ, ռեստորաններից։ Մարդիկ, տեսնելով նրան, իջեցնել են մեքենաների լուսանուտներն ու բարձրաձայնել իրենց երաժշտական պատվերների մասին։

Արթ Լաբոն համարվում է Կալիֆոռնիայում ռոքնռոլի և «ռիթմ և բլյուզ» ռժի ռաիվորաններից։ Դրանք նա սկսել է ժողովրդականացնել 1950-ականների կեսին վարելով սեփական հաղորդումը Լոս Անջելեսի KXLA ռադիոկայանում։ Արթ Լաբոն հաղորդումներից հետո Լոս Անջելեսի էլ Մոնթե արվարձանում կազմակերպում էր ռոքնռոլի պարային երեկույթներ՝ նպաստելով լատինամերիկացի, սևամորթ, ասիացի և սպիտակամորթ երիտասարդների ներգրավմանը։ Նրան հատկապես երկրպագում էին Կալիֆոռնիայում և հարակից նահանգների մեքսիկացիներն ու մյուս իսպանախոսները՝ լատինամերիկյան երգերի շարունակական հեռարձակման, հատկապես իր «Սալսայի հետ» հաղորդ-



ման համար։ «Ես կարող եմ շատ լավ հայերեն խոսել»- մի առիթով ասել է Լաբոն,- բայց կարող եմ նաև նույնքան լավ իսպաներեն խոսել»։ Ի դեպ, «South El Monte Arts Posse» խումբը, որը հավաքում է բանավոր պատմություններ և լուսանկարներ քաղաքում ռոքնռոլի սկզբնական շրջանի և ամերիկա-մեքսիկական կյանքում դրա ունեցած կապերի մասին, իր ծրագրում կարևոր տեղ է հատկացրել Արթ Լաբոյին...

1990-ականների սկզբից Արթ Լաբոյի ռադիոհաղորդումները հատկապես ժողովրդական են դարձել բանտերում գտնվողների ու նրանց ընտանիքի անդամների համար։ Դատապարտյալներից ամեն տարի նա ստացել է հազարավոր նամակներ, որոնց հեղինակները խնդրել են իրենց սիրելիների համար հեռարձակել այս կամ այն երգը։ «Ես չեմ դատում,- մի առիթով ասել է Արթ Լաբոն,- ես սիրում եմ մարդկանց։ Մե-


րը հզոր դեղամիջոց է՝ սիրահարված լինես կամ ոչ»։ Այս համոզմունքով Արթ Լաբոն եթերից իր հարուստ բարիտոնով սեր է սփռել՝ հաճախ համենելով իր և ունկնդիրների համբույրի ծայներով։ Նա հորինեց «Oldies But Goodies» («Հին, բայց լավ երգեր») եզրը, և տարբեր տասնամյակների լավագույն երգերն այսօր ընդունված է ամփոփել այդ վերնագրով հավաքածուներում։

«Իմ կարծիքով նա ժամանակից դուրս է՝ ասել է ամերիկուհի գրող Սյուզան Սթերթը։- Պետք է խոստովանեն, որ երբևէ չեմ մտածել որևիցե գիշերվա մասին՝ առանց Արթ Լաբոյի ծայնի»։

Մինչև կյանքի վերջը Արթ Լաբոն Փայվ Սփրինգս իր ստուդիայում շաբաթական վեց անգամ երեկոյան ժամը 7-ին, վարել է «Արթ Լաբո կապը» հաղորդումը, որը փռել է նաև Կալիֆոռնիայի տասնյակ ռադիոկայաններ՝ հին ու բարի երգերի միջոցով միմյանց կապելով հազարավոր մարդկանց։ Ռադիոյի միջոցով իրարից հեռու գտնվող սիրելիների կապելու թվացյալ հնաժողովական իրեն միանգամայն արդարացրել է կովիդի պարտադրած ինքնամեկուսացման ամիսներին, որի ընթացքում ամերիկյան ռադիոյի լեզուները հռչակված Լաբոն դարձյալ ջանք չի խնայել՝ մարդկանց պարզաբանելու բերկրամեծ և միասնականության զգացողության պահին...

Արթուր Էգոնյանը մահացել է թոքաբորբից 2022 թ. հոկտեմբերի 7-ին՝ 97 տարեկան հասակում՝ վերջին հաղորդումից մեկ օր անց։

Արծվի ԲԱՆԺՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու



Մ. Սարգսյան - Եղիշե Չարենց

Խմբագրության կողմից. ընթերցողին ենք ներկայացնում մի ուշագրավ պատմություն, որն առնչվում է մեր մշակույթի երկու նշանավոր դեմքերին՝ Մարտիրոս Սարգսյանին և Եղիշե Չարենցին: Իսկ այդ պատմության հերոսը վաստակաշատ գրականագետ ու արվեստաբան Նշան Մուրադյանն էր, ով կյանքի վերջին տարիներին աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի շեքսպիրագիտության կենտրոնում:

Մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարգսյանը 1923 թ. վրձնել էր իր հանրահայտ կտավներից մեկը՝ Եղիշե Չարենցի դիմանկարը: Այն երկար տարիներ պահվում էր Գրականության և արվեստի թանգարանում, որտեղ Նշան Մուրադյանը 1930-ական թվականներին աշխատում էր որ-

ԻՆՉՊԵՍ ՓՐԿՎԵՑ ՉԱՐԵՆՑԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

պես արխիվի վարիչ:

Եկավ չարաբաստիկ 1937 թվականը... Չարենցակործան դժնդակ օրերին, երբ հակաչարենցականներն ավելի միաձույլ էին, քան Չարենցն ու իր համախոհները, երբ բարեկամներից շատերը դադարել էին այցելել նրան, երբ ամիսն ու դաժանորեն ոչնչացվում էր նրա անվան հետ կապված ամեն արժեքավոր բան, 29-ամյա Նշանն արեց իր կյանքի ամենահամարձակ քայլերից մեկը՝ դիմելով ժայռահեղ ռիսկի...

Անցել էին ռեպրեսիայի տարիները, Չարենցն արդարացված էր: Հենց այդ օրերին լուրեր պտտվեցին, որ Մարտիրոս Սարգսյանի վրձնած գլուխգործոցներից մեկը՝ Չարենցի դիմանկարը, թաքցրել և ոչնչացումից փրկել են Նշան Մուրադյանը և թանգարանի գիտաշխատող Պարզևուհի Սիմոնյանը: Նրանք այն տեղափոխել են թանգարանի նկուղ և փակցրել մեկ այլ նկարի հետևի կողմում: Եվ ահա, երբ նկարը հանում են և հրավիրում Մարտիրոս Սարգսյանին, նա, տեսնելով նկարը, այնպես է հուզվում, որ, ինչպես պատմում են ներկայները, վարպետը երեխայի պես լաց էր լինում: Սարգսյանը գրել է Նշանին, համբուրել և խնդրել այդ նկարն ընդունել իբրև պարգև իր կատարած հերոսության

դիմաց: Նշանը բնականաբար հրաժարվել է այդպիսի շռայլ նվիրատվությունից:

Նշան Մուրադյանն իր այդ խիզախ արարքով ապացուցեց, որ դեռ ամեն ինչ կորած չէ: Վտանգի ենթարկելով իր կյանքը՝ Նշան Մուրադյանը փրկեց Չարենցի դիմանկարը սերունդների համար՝ վերականգնելով նաև մարդու հավատն ու արժանապատվությունը: Եղիշե Չարենցի փրկված դիմանկարն այսօր ցուցադրվում է պոետի անունը կրող Գրականության և արվեստի թանգարանի ցուցասրահում:

Տարիներ անց խորհրդանշական քայլ է կատարում Մարտիրոս Սարգսյանը, Չարենցի դիմանկարը փրկելու համար երախտագետ նկարիչը վրձնում է Նշան Մուրադյանի դիմանկարը, որը նրա ստեղծագործական վերջին շրջանի լավագույն դիմանկարներից է:

Խորհրդանշական էր նաև արվեստաբան Նշան Մուրադյանի մահը: Ինչպես գրում է նրա կինը՝ արձակագիր Անահիտ Սեկոյանը. «...ինքը չզգաց իր մահը ու զնաջ ծուլվեց մեր չքնաղ բնությանը, որը դարձյալ արվեստից պոկված մի հատված է: Նա հանգավ 1982 թ. Սևանի, իր պաշտած Սևանի ալյակների վրա»:

Մեկ ուշագրավ պատմական փաստ էլ է առնչվում գրականագետ Նշան Մուրադ-



Մ. Սարգսյան - Նշան Մուրադյան

յանի անվան հետ: 1938 թ. 30-ամյա Նշանին է վստահվում Թիֆլիսից Հովհաննես Թումանյանի՝ անոթի մեջ ամփոփված սրտի տեղափոխումը Երևան: Նշան Մուրադյանը վերհիշում է, թե ինչպիսի երկյուղածությամբ է անոթը գնացրել տեղափոխել Երևան. «Քնելու մասին չեմ էլ մտածում: Քնելը բացառված է: Այս թանկագին, անսովոր մասունքի միակ տեղը իմ գիրկն է: Չեմ քնում, համոզված եմ, որ չեմ քնել նաև շատերը, թերևս ամբողջ գնացքը:

Նրանք բոլորը, բոլոր ուղևորները Երևան են տեղափոխում ամենայն հայոց բանաստեղծի սիրտը»:

Տպագրվում է ըստ «Նշան Մուրադյան. մարդը, գրականագետը, իմաստասերը» գրքի («Գիտություն» հրատ., 2011 թ.):

ՄԵԾԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

«Ցավն անցնում է, իսկ գեղեցկությունն ապրում է հավերժ»



Աշխարհահռչակ նկարիչ Օգյուստ Ռենուարը մինչև վերջին շունչը չկարողացավ թողնել իր վրձինն ու պարզապես վայելել վերջին օրերը:

Ռենուարի հետ կապված մի հետաքրքրական պատմություն կա: Ասում են՝ երբ Ռենուարն արդեն ընկղմվել էր ծերության մեջ ու զգում էր նրա ողջ ծանրությունը, նրա ձեռքերն անասելի սկսում են դողալ, ու վրձին բռնելը նրա համար սովորականից մի քանի անգամ ցավոտ է դառնում:

Այդ ժամանակ նրան է այցելում ընկերներից մեկը, ով այնքան էր մտահոգված Ռենուարի ա-

ռողջությամբ, որ պարզապես չէր կարող անտարբեր մայել իրեն ավելի ուժասպառ առողջ ընկերոջը:

Տեսնելով Ռենուարի՝ վրձնից դողացող ձեռքերը՝ նա հարցնում է.

- Օգյուստ, ընկերս, ինչո՞ւ չես թողնում նկարչությունը: Դու այն տարիքում ես, որ դա միայն բարդացնում է քո կյանքը, վատթարացնում առողջությունը: Ի վերջո, այն առողջական վիճակում ես, որ վրձնի յուրաքանչյուր հպումից ձեռքերդ մահացու ցավում են:

Ռենուարը շրջվում է դեպի ընկերն ու պատասխանում.

- Գուցե իմ ձեռքերը ցավում են, ու, այո, ինձ համար դժվար է ամեն անգամ վրձնի կաշելը, բայց ես գիտեմ մի պարզ ճշմարտություն. ցավն անցնում է, իսկ գեղեցկությունը, որ ծնվում է այդ ցավից, կապրի հավերժ:

Անցել է ավելի քան մեկ դար, սակայն մարդկությունը հազվադեպ է հիշում նկարչի հիվանդության ու ցավոլ ձեռքերի մասին, բայց նրա նկարները զարդարում են աշխարհի ամենահայտնի թանգարաններն ու ամենահարուստ հավաքածուները:

Ճարտարապետը մեկուսացվեց իր կառուցած շենքի նկուղում



Երևանի Նալբանդյան փողոցում գտնվող Հայաստանի ազգային անվտանգության ծառայության շենքը կառուցվել է 1936 թ. անվանի ճարտարապետ Գևորգ Քոչարի նախագծով:

Հիմնարկությունից անցել էր մեկ տարի, երբ ողջ խորհրդային Միությունում սկիզբ առան զանգվածային բռնաճշմունքները: Ժողովրդի թշնամի որակավորմամբ բանտարկվեցին և աքսորվեցին երկրի քաղաքական վերնախավի, մշակույթի, գիտության և տարբեր բնագավառների բազմահազար ներկայացուցիչներ: Դրանք թվում հայտնվեց նաև Գևորգ Քոչարը: 1938 թ. նրան ձերբակալեցին, և նա հայտնվեց իր իսկ կառուցած շենքի նկուղում:

Ամիսներն անցնում էին, սակայն նրան չէին հարցաքննում: Մի օր նա ասում է. «Հոգնեցրել է ինձ այս անորոշությունը: Եվս երկու օր առանց հարցաքննության, և ես կփախչեմ այստեղից. Չէ՞ որ ինքս եմ նախագծել այս շենքը, այնպես որ գիտեմ բոլոր մուտքերն ու ելքերը: Այստեղ մի գաղտնի դուռ կա...»: Երկու ժամ էլ չանցած՝ Քոչարին կանչում են հարցաքննության. խոսքը տեղ էր հասել: 1939 թ. նա դատապարտվեց և աքսորվեց Սիբիր: Արդարացվելուց հետո նա մնաց այնտեղ և մասնակցեց Նորիլսկ, Դուլինսկ, Կրասնոյարսկ քաղաքների կառուցապատման աշխատանքներին:

Գևորգ Քոչարը 1960 թ. վերադարձավ Երևան և իր ողջ ուժերը նվիրեց քաղաքի կառուցապատման գործին: Երկար տարիներ նա աշխատեց որպես «Երևանմախագիծ» ինստիտուտի գլխավոր ճարտարապետ: Նրա նախագծերով են կառուցվել «Մոսկվա» կինոթատրոնի, ռուսական դրամատիկական թատրոնի, կենտրոնական հանրախանութի և շատ այլ շենքեր:

Արևելյան իմաստություն. երեք կարևոր բան մարդու կյանքում

Երեք բան երբեք չեն վերադառնում՝ ժամանակը, խոսքը, հնարավորությունը:

Երեք բան չի կարելի կորցնել՝ համագտությունը, հույսը, պատիվը:

Երեք բան կյանքում առավել արժեքավոր են՝ սերը, համոզմունքները, ընկերությունը:

Երեք բան կյանքում երբեք հուսալի չեն՝ իշխանությունը, հաջողությունը, հարստությունը:

Երեք բան են բնորոշում մարդուն՝ աշխատանքը, ազնվությունը, նվաճումները:

Երեք բան են կործանում մարդուն՝ գինին, գոռոզամտությունը, չարությունը:

... բայց երբեմն մինչև ամեն ինչ հասկանաս, մի ամբողջ կյանք կանցնի:

Աշխարհում նաև երեք անհմաստ բան կա. փողը՝ ժլատի ձեռքին, սուրը՝ վախկոտի ձեռքին, գրիչը՝ տգետի ձեռքին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Ակադեմիական գրագրության և հաղորդակցության հմտությունների խորացմանն ուղղված ծրագրերի իրականացման մրցույթ»



ԱՎԱՐԵՆԻԱՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ խորացմանն ուղղված ծրագրերի իրականացման մրցույթ

Մրցույթի նպատակներն են նպաստել գիտահետազոտողների ակադեմիական գրագրության հմտությունների և միջազգային գիտական համայնքների ու գիտնականների հետ հաղորդակցության կարողությունների զարգացմանը, որակյալ հետազոտական նախագծերի և գիտական աշխատանքների պատրաստմանը, գիտական թվային հարթակներում երիտասարդ գիտնականների ներկայանալիության որակի բարձրացմանը:

Ֆինանսավորման առավելագույն չափը կազմում է երկու միլիոն (2.000.000) ՀՀ դրամ:

Նախատեսվում է ֆինանսավորում տրամադրել այն նախագծերին, որոնք վերաբերում են գրագետ գիտական աշխատանքներ գրելուն, գիտական շարադրանքի հմտությունների զարգացմանը, գիտական հաղորդակցության հմտությունների խորացմանն ուղղված դասընթացների կազմակերպմանը, գիտաչափության հիմունքներին, գիտական շտեմարաններին և դրանցից օգտվելու ձևերին ծանոթացմանը և գիտական գործունեության ոլորտում մտավոր սեփականության իրավունքների, գրագրության, գրագրության ստուգման հարթակների վերաբերյալ գիտելիքի տրամադրմանն ուղղված հանդիպումների կազմակերպմանը:

Նախագծի բովանդակությունը և դրա իրականացումը պետք է նախատեսել 12 ամսվա համար: Մրցույթի հայտ կարող են ներկայացնել ՀՀ-ում գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, հետազոտական ՀԿ-ների, հիմնադրամների ներկայացուցիչներ, մասնագետներ, մասնագետներից բաղկացած խմբեր տարբեր կազմակերպություններից, այդ թվում՝ ՀԿ-ներից, որոնք կարող են նախաձեռնել դասընթացների կազմակերպումը: Մրցույթի հայտատուում և խմբի դեպքում նաև անդամները պետք է հանդիսանան ՀՀ-ում մշտապես բնակվողներ կամ ռեզիդենտներ:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2024 թվականի սեպտեմբերի 29-ը:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 24.09.2024 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: